

ՄԱՐԵԻԵԼԵԱՆ
Մ Ա Մ Ո Ւ Լ

1871

ԱՅՐԻՆ

THE SUFIS

30-1-1 4

ՊԱՐՈՒՆԱԿԱՆ ԹԻՒՆ

[illegible]

ዲ.ዊ.ቲ.ቢ.ቲ.ኤ

ՏՊԼԳ.ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՏԵԵԼԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ա. ՏԱՐԻ

ԱՊՐԷԼ 1871

ԹԻՒ 4

ՄԱՅՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՆՈՐԱՏԻ ՄՕՐ ՄԸ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ: — ԽՈՐՀՈՒՐԴ
ՆԵՐ ԱՌ ԻՐ ԲԱՐԵՆԱՄՈՒՀԻՆ

Բ.

Թէ և երկու բարեկամուհիք իրարմ տարբեր կերպով կ'իմանային մայրական սլաքաբեր, սակայն ստէպ կ'իստէին իրենց զաւակաց վրայ: Օր մը՝ Մարի, մայրական դորովոյ անուշու-թիւնները կ'զոյէր. իսկ Մաթիլա՝ անոր նեղութիւնները կ'իշխէր ցաւազին: Մարի իր ազջկան ժպիտն ու թոթովումը սիրովին կ'իշխէր, Մաթիլա իր որդւոյն տաղաւալի պահանջումներէն կ'զանդատէր:

« Տեսնել պէտք ես, կ'ըսէր նա, թէ ինչ լաւկան, ինչ անհամբեր տղայ մ'է, ինչպէս իր դայեկն անդադար անոր վրայ

հսկելու ստիպուած է, կարծես թէ քանի մեծնայ և զօրանայ, այնչափ պիտոյքը կ'աւելնան :

— Նայէ որ չխաբուիս, պատասխանեց Մարի, շատ անդամ տղաք լալով պոռալով իրենց կամքը կատարել կ'ուզեն քան թէ իրական պիտոյք մը յայտնել, քանի որ ուրիշ միջոց մը չունին և այսպէս սովորած են : Երբ տեսնեն որ ձայներնին կտրելու համար իրար կ'անցնինք, կ'զգան որ մեր վրայ կ'իշխեն, և այս կերպով իրենց խելքին փչածը կատարել կ'տան մեզ. արդ՝ ճիշտ այս մեր գործածած միջոցով իրենց պահանջումներն ու նեղութիւնները կ'աւելցնեն : Այս բանին առաջն առնելու համար, աղջկիս վրայ, որ դեռ ութ ամսուան կայ, շատ փորձեր ըրի : Հազիւ վեց ամսուան էր և կ'զգար արդէն որ իր ճիշերն անօդուտ են : Իրաւ է որ այս փորձերն ընելու ատենս շատ նեղութիւն քաշեցի, բայց այս գէշ սովորութիւններուն չվարժած գործի սկսեր էի :

— Յիրաւի, շատ հետաքրքիր եմ իմանալու, վրայ բերաւ Մարիլա՝ չհատալու երես մը ցոյց տալով, թէ ինչ փորձ կըր՞նաս ընել այս փոքրիկ հասակի տղու մը վրայ :

— Նախ անձանձիր խնամօք աղջկանս ամէն պիտոյքը կ'հօդայի, ապա անկողինը կ'դնէի, և եթէ լար, ձայնը կտրելու համար զանի զրկելու տեղ, հետը խօսելով զոհ կ'լինէի, որոպէս զի իմանայ թէ իրմէ հեռու չեմ : Վերջէն անկողնին մօտ կ'երթայի, ձայնը կտրելէն քիչ մ'ետքը, կ'զրկէի, կ'խաղցնէի զանի, և երբ յոգնէր, նորէն տեղը կ'պառկեցնէի : Հաստատ միտքս դնելով որ նորէն զիրկիս չառնում երբ պոռալ կանչել սկսի : Այս նպատակին հասնելու համար կարգէ դուրս արիութիւն և հաստատամտութիւն պէտք է, բայց նաև ինչ օգուտներ չենք քաղեր : Գիտած ես արդէ՞ք որ զործաւորներու և զիւղացիներու տղաք մերիններէն աւելի հանդարտ են. ինչո՞ւ, որովհետեւ ինչ որ մենք խելքով կրնանք ընել անոնց մայրերը բըռնութեամբ կ'կատարեն :

— Սակայն, սիրելիս, վրայ բերաւ Մարիլա, անոնց տղաք շատ գէշ կ'նայուին : Ես ընդ հակառակն տղուս ստնտուկն յատկապէս տպաւորեցի որ բնաւ զանի չլացնէ, և մայրս ալ որ զրեւ թէ տարւոյն մեծ մասը զիւղը կ'անցնէ, կ'նայի որ պատուէրս կ'կատարէ թէ ոչ : Իրաւի չեմ կարծեր որ զուայն կիներուն

նմանիս որ շատ անգամ իրենց զաւկներն երեսի վրայ կ'ընողուն. . . :

— Միտքս անոնց դէշ ընթացքին հետեիլ չէ, կ'փափաքիմ միայն հեռատեսութեամբս հոգալ զաւկիս օգուտ մը, զոր հարկը անոնց տղոց կ'սորվեցնէ :

— Բայց դու քու օգտիդ կ'աշխատիս :

— Ստոյգ է որ օգուտ կ'քաղեմ, բայց ասով որչափ զաւկիս նոյնչափ ինձ բարիք ըրած կ'լինիմ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Զ'ըսիր ինձ թէ որդիդ պահանջող, անխորհուրդ, լաւ կան, անհամբեր է, թէ անդադար նոր նոր պիտոյք կ'յայտնէ. . . :

— Այո, և եթէ շուտ իր կամքը չկատարեմ, լացը կ'աւելցնէ :

— Եւ միթէ այսպէս անդադար զայրանալովը կարծես թէ երջանիկ կ'լինի :

— Հարկաւ, եթէ հանդարտ մնար աւելի լու կ'լինէր, սակայն դու ալ չես զիտեր որ չափէն աւելի հանդարտ և լռիկ երախաները շատ անգամ մոմէ պէպէկներու կ'նմանին, այսպիսիները չունին բնաւ այն ուշիմ և կայտաւ կերպարանն որ ընդհանրապէս խնամալ տղոց վրայ կ'տեսնուի :

— Ա՛հ, բայց ես աղջկանս վրայ շատ ինամք կ'տանիմ, ըսաւ եռանդալին տիկին Տէլմ, հետը կ'խօսիմ, կ'խաղամ, և անոր փափաքները կ'կատարեմ, բայց կ'նայիմ որ չափը չաւելցնէ :

Մամբիւտ իր բարեկամուհւոյն մտացի խօսքերուն ուշ չէր դներ, և որովհետեւ դաստիարակութեան մասին վեր 'ի վերոյ գաղափարներ ունէր, բնաւ միտքէն չէր անցըներ որ մանկութեան սովորութիւնները կրնան ներդործել ապագային մէջ : Ուստի կ'ը-
-էր. « Երբ որդիս մեծնայ, վատ սովորութիւնները կ'մոռնայ », ասով կ'մխիթարուէր : Կարծէր թէ իր մայրական պարտիքը իովին կատարած է, իր տղեկին համար դայեակ մը բռնելովը՝ քուն պաշտօնը թէև իրեն շատ սուղի կ'նստէր՝ բայց բաւական էր որ անոր մաքրութիւնն և արթնութիւնը ուրիշները գովէին :

Տիկին Տէլմ՝ գիտնալով որ իր բարեկամուհին բարի սիրտ մ'ունի, թէև թեթեւ դաստիարակութիւն մ'առած լինելովը ծանր բաներու վրայ խօսիլ չէր փափաքեր, ամէն առթիւ ընտիր խորհուրդներ կ'տար անոր, և երբ տիկին Վէրնէյը նոր զանգատ մ'ունենար, իր բարեկամուհւոյն խորհուրդ հարցնելու կ'գիմէր :

ՊԱՐՏԱԶԱՆՑ ՄԱՅՐԵՐ: — ՅԱՒԱԼԻ ՀԵՏԵՒԱՆՔ

Գ.

Մարի Տէլ՝ մայր ըլլալէն ՚ի վեր՝ խիստ ծաղրելի կ'զտնէր հարուստ կիներու ընթացքը, որով իրենց զաւակաց հոգը դայեակներու կ'թողուն. հանդարտ և անտրտունջ եղած ատենը միայն զանոնք կ'տեսնեն և կ'փայփայեն, և երբ ժպտին և թոթովէն այն ատեն միայն կ'զուարճանան: Տիկին Նէրվալ, որ Մարիին հետ ատեն մը շատ սիրով էր, հիմա հետը ստէպ չէր տեսնուեր, իսկ Մարիլտ Վէրնէյլ Մարիին հետ յարաբերութիւնը կ'շարունակէր, և թէ և առաջ նորատի կիներու սովորութեան համեմատ՝ իր առաջին պարտաւորութիւնը մոռնալու սկսնէր, սակայն կ'զմայլելը իր բարեկամութիւն անուշութեան, համբերութեան և խելքին վրայ և անոր օրինակին հետեւելու տրամադրութիւն կ'ցուցնէր:

Տիկին Տէլ՝, որ բոլոր ամառը զիւզն անցուցեր էր, ՚ի դարձին իր բարեկամութեան այցելութիւնն ընդունեց:

«Սիրելիս, քեզ շատ բաներ ունիմ՝ պատմելու, ըսաւ Մարիլտ, և նոյն իսկ քու խրատներուդ կտրօտ եմ: Քու մեկնելէդ ետքը՝ տղաս դայեկին քովէն առնու վրայ էի, և այն ատենէն ՚ի վեր քովս է: Չես կրնար երեակայել, սիրելիս, թէ այս տղաս որչափ կ'նեղէ մեզ, կուտսէր, յամառ, կամահաճ և լալկան տղայ մ'է. և որ մեծն է, մայրս զանի տուն բերելէն առաջ իր քովը պահելուն, ինքն ալ մեզի մնաց, որպէս զի տղաս մեզի հետ վարժի, և որովհետեւ չափազանց կ'սիրէ և շատ երես կ'տայ անոր՝ օր ըստ օրէ անգլիպելի կ'դառնայ: Մայրս կը կարծէ թէ պարտապ մեզ անոր սիրտը կ'կտրեմ, թէ անոր բարքը պիտի աւրեմ՝ կամ դժբաղդ պիտի ընեմ զանի, և եթէ տղան յանդիմանեմ՝ կամ վախցնեմ, մէկէն զիրկը կ'առնու, կը գզուէ և կ'ամբը կ'կատարէ: Ահա ասոր համար իմ պղտիկ Պոլս երթալով անտանելի կ'դառնայ: Չարածախն երկու տարեկան հաղու կայ և այժմէն մեր վրայ կ'տիրէ: Մայրս կ'ըսէ երբ որ խելքը բացուի այս ամէն պակտութիւնները պիտի կորսուին: Բայց պէտք է առ այժմ անոր առջև զլուխ ծուել և շատ անգամ անոր լացը տեսնել, վասն զի հազիւ անոր մէկ փափաքը

կ'կատարես և ուրիշ մ'երևան կ'հանէ, և երբ այս բունաւորութենէ ձանձրանալով անոր ձեռքէն սղալով ուզես, այնպիսի աղաղակներ կ'արձակէ որ անոնց վերջ տալն անկարելի կ'լինի: Մարի, սղաս կարգի բերելու փորձեր կ'ուզեմ ընել, բայց չեմ գիտեր ինչ ճամբայ բռնեմ: Գու դաստիարակութեան վրայ շատ մտածեր և փորձեր ըրեր ես, ինչպէս որ շատ անգամ քու զիտողութիւններդ ինձ հաղորդեր ես. այն ատեն հազիւ ըսածներդ ականջ կ'դնէի, այսօր քու խորհրդէդ օգուտ քաղելու տրամադիր եմ, ըսէ ինձ, ինչ պէտք է ընել:

— Գրեթէ քեզի չափ ես ալ կ'տարակուսիմ այդ մասին, պատասխանեց տիկին Տէլմ, վասն զի խնդիրը վատ սովորութիւններու առաջն առնլու վրայ չէ, այլ զանոնք զսպելու, և այս մասին դեռ փորձ մ'ըրած չեմ: Սա գիտեմ որ առաջին պարագային հարկ է ուժգին դիմադրել, իսկ երկրորդ պարագայի մէջ պէտք է որ կորուսած իշխանութիւնդ ձեռք ձգես, և այս բան ալ շատ դժուարին է, վասն զի տղադ ինքզինքն ուժեղ և քեզ տկար կարծելով աւելի ըմբոստ լինելու պատճառ մը կ'ունենայ: Այն ատեն պէտք է անոր զղայնել որ սխալած է և անոր աղաղակներն ու ցատումը զսպել: Կան տղաք որ իրենց կամաց դիմադրող ինչ որ գտնեն կ'խորտակեն, կան նաև այնպիսիներ որ ինքզինքնին կ'ուտեն, կ'սպառնան իրենց անձին չարիք հասցնելու որպէս զի ահադքեն, և շատ անգամ այս հնարքով կը յաջողին:

— Աստուած իմ, զոչեց Մաթիլտ, բայց միթէ այն ատեն անոնց կամքը կատարելու ստիպուած չե՞նք:

— Ընդ հակառակն կարծեմ թէ անոնց այս վարպետութեան անտարբեր մնալ, և փնտ հասցնելու վիճակէն ազատ պահել պէտք է:

— Բայց եթէ ինքզինքնուն չարիք մը հասցնեն այն ատեն . . . :

— Նախ նոյն իրենք պիտի զգան և կրկնելու չպիտի յանդրդնին: Սակայն եթէ քեզ ահաբեկելու յոյս չունենան, նորէն կրկնելու պիտի զղուշանան:

— Ո՛հ, այդպիսի փորձերու անկարելի է ինձ համբերել, զոչեց տիկին Վէրնէյլ:

Եւ կ'լար կ'ողջար մտածելով որ ինչո՞ւ համար այս անպատահութեանց առաջն առնլու հոգ չէ տարեր:

— Տակաւին տղեկդ շատ փոքր է և չկրնար այդ ծայրայեղ ընթացքը բռնելու, կրկնեց տիկին Տէլմ: Մի վհատիւր, վասն զի այդ կերպով գործն աւելի կ'ծանրացնես: Պէտք է դարմանը դտնել քանի որ դեռ ժամանակ ունիս:

— Պիտի փորձեմ, ըսաւ Մաթիլտ հառաչելով, սակայն յարեց նա պահ մը մտածելով, կ'վախնամ որ այս փոքրիկ տղեկիս սէրը չկորսնցնեմ:

— Տղաք միշտ կ'սիրեն անոնք որ իրենց նկատմամբ արդարապէս են:

— Սակայն ի՞նչ օգուտ եթէ միայն ես սաստեմ զանի և ըրածներուն զիմադրեմ, երբ միւս կողմէն ամենքն անոր հաճոյքը պիտի կատարեն:

— Ասոր համար պէտք է այնպիսի ընթացք մը բռնել որ միշտակ քեզի հետ զործ ունենայ: Սակայն ես չեմ յորդորեր քեզ որ տղադ յանդիմանես և ոչ իսկ դիմադրես, ընդ հակառակն կ'յորդորեմ քեզ որ հետն աւելի անուշութեամբ վարուիս, եթէ պահանջող դառնայ, պէտք է այն ատեն միայն դէմ դնել և անոր ապիկարութիւնը զգացնել:

— Շատ աղէկ, ըսաւ Մաթիլտ հաստատամտութեամբ, քու խորհրդիդ պիտի հետեւիմ, բայց պիտի ստասեմ որ մայրս մեկնի, վասն զի արդէն բաւական մեծ նեղութիւն պիտի կրեմ զաւակս զսպելու, և չեմ ուզեր որ միւս կողմէն մօրս հակառակութիւնը քաշեմ:

— Ուրեմն խօսքիդ նայելով՝ տակաւին շատ պիտի սպասես եթէ մայրդ այս ձմեռ ձեզի հետ անցնէ, այն ատեն տղադ երեք տասրեկան պիտի լինի և պաշտօնդ աւելի պիտի դժարանայ:

ՍԱՀՄԱՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ԶՄԻՒՈՆԻԱ

— Եւ ինչո՞ւ Զմիւռին իր երեսփոխանը չունի կեդրոնական Ընդհանուր ժողովին մէջ, ինչպէս անհոգ և անտարբեր կրնայ

մնալ Սահմանադրութեան զործադրութեան մասին, քանի որ ի վաղուց հետէ Արշալուսին և մօտ օրերս Արևելեան Մահալէն միջոցաւ՝ դատաւային հայոց իրաւանց ախոյեան կ'կանգնի և բողոքելով կ'սկսէ թէ՛ Աեդրոնական Ընդհանուր ժողովն անկատար է առանց զաւառական երեսփոխանաց, արդ' ահա շատ մը դատաւորներ կ'ընտրեն իրենց երեսփոխանները, ընդէր Զմիւռն իրը չընտրելով, միթէ՛ Կարենյ, Բաղեշի, Երզնկայի չափ ալ չկայ. . . » : Ահա այս հարցումը կ'ուղղէին մեզ դրսերէն և մեք պատասխան տալու համար զանազան բարուրներ կ'փնտռէինք. իսկ այսօր խնդագին կ'հրատարակենք որ մեր քաղաքացիները կ'պատրաստուին նորէն Սահմանադրութիւնը գրկելու՝ իբր փրկութեան խարիսխ մը, և անով շատ մը վէրքեր դարմանելու :

Եւ ի՞նչպէս :

Այս տեղ է՝ չէ թէ՛ Պաքոսի լեռն, այլ Գարսեան ժայռը . . . : Արդարեւ աւելի դիւրին է մեր Անյաղթ փիլիսոփային որակներուն վրայ ճառել, Պ. Չամուռճեանի Բաւքալայ Խորհրդաշուքի հասկնալ, քան թէ տեղւոյս ազգային դարձուածները նկարագրել և անոնց շարժիչ թելերն որոնել . . . , Հետեւապէս մեր միտքը մի քանի տարուան իրողութիւններ քննել չէ, այլ անկողմնակալ ողուով և հարեանցի պատմել միայն ի՞նչ որ իրաց արդի վիճակին դիւրիմացութեան կարեւոր են :

1866ի նկատական պատահարին *հիմահարը* (contre-coup) տեղւոյս սահմանադրական վարչութիւնը գրեթէ տապալեց : Այն ինչ մայրաքաղաքէն զուժկան եկաւ հասաւ թէ՛ Սահմանադրութիւնը դադարել է որ բռնասէր մարդիկ « նորէն մեր օրը ծագեցաւ » ըսելով միապետական դրութեան դարձան : Ժողովուրդը՝ թէև զղասաւ և արթուն՝ յանկարծակի զաւով անակնկալ դէպքերէ՝ ձայն ձիւն չհանեց և թողուց որ պարագաները խօսին : Ահա այն ատեն ինքնընտիր խորհուրդներ, քննաժողովներ, մենավաճառական անօրէնութիւններ տեղի ունեցան : Որչափ որ բարձրագիւր անձինք իրենց ոյժը կ'չափէին՝ ժողովուրդն անտարբեր մնաց, սակայն երբ տեսաւ որ ազգային հաստատութիւններն ևս զործիք կ'դառնան կրից՝ սա խորհրդածութիւնն ըրաւ .

— Զարմանք՝ եկեղեցի, առաջնորդարան, դպրոց և հիւանդանոց ի՞նչ վերաբերութիւն ունին անձնական կռիւներու հետ :

ինչ իրաւամբ այս ինչ անձն այն ինչ անձին դէմ յաղթական
կանգնելու համար աղգային իրաւունք, մանկտի, քահանայ,
դասատու ոսնակոխ կ'ընէ : Ո՛վ է աղգային կալուածոց և հաս-
տատութեանց տէրն եթէ ոչ ես ինքս : Եթէ մեր մեծերն ուժով
են՝ ինչո՞ւ համար իմ վրայ կ'կռթնին իրենց անձնական դերը
խաղալու, նշան ու բարձ վաստկելու, կամ ոսոխ մը կործանե-
լու : Ե՛հ, աղղը բարոյապէս և նիւթապէս կ'տուժէ այս փծուն
վէճերով. այսպանելի է այս վիճակը, թոթուենք մեր թմրու-
րութիւնը, մեր հանրական շահերը պաշտպանենք և ժողովրդա-
յին վարչութիւն մը կազմենք, քանի որ մեր հին երեսփոխան-
ներէն ոմանք հրաժարած են և ոմանք բռնութեան թելն կ'ա-
ծեն » :

Եւ արգարեւ 1868ին հասարակաց իրաւունքը յաղթանակեց .
ժողովուրդն՝ ամէն մասնաւոր նկատումներ առ ոչինչ զրելով՝
ցոյց տուաւ որ օրինաւորութեամբ դործել գիտէ, եթէ կամենայ .
ուստի իր ծոյցն վարչութիւն մը կազմեց՝ որ երկու տարիի չափ
իր պաշտօնն ըստ օրինի կատարելէն ետե՛ւ իր հրաժարականն Ա-
մենապատիւ Առաջնորդ հօր մատոյց : Սրբազանն՝ որ իր պատ-
րիարքական երկարաաւելիանութեան օրով՝ զրեթէ մոռցեր էր
իր առաջնորդական վիճակին նոր տրամադրութիւններն ու չէր
կրնար իսկոյն նշմարել զաղանի զժառութեան մ'որոմները, այն
ինչ՝ նոր վարչութիւն մը կազմելու կ'սպարաւասուէր որ յան-
կարձ հմայութեամբ մ'ինքնուրոյն կազմուած խորհուրդ մ'իր ձեռ-
քին ներքեւ դտաւ : Յետադիմական ստարքը՝ նախորդ դասերէն
անփորձ՝ վրիժու ոգւով իր նախորդին անօրէնութիւնները ջնջե-
լու կ'առաջադէր և գրամական նեղութեան սրտաբուսկաւ՝ մինչև
անդամ աղգային վարժարանները՝ որ պահ մը զոյուեցան, 'ի
տպաւ դոյ պահելու չնկնի երկմաէր եթէ՛ քանի մը խոհական
անձանց թելադրութեամբ՝ նպաստ ժողվելու համար հանդանա-
կութիւն մը չբացուէր 'ի պաշտօնէ : Սոյն հանդանակութեան պայ-
մանը՝ թէև ապօրէն՝ անտես առնելով շատերը մասնակից եղան,
օակայն այս առթիւ՝ նորէն դէմ առ դէմ եկան ներհակ կու-
սակցութիւններ և հանդանակութեան զործը վիժեցաւ :

Ասոր վրայ վերստին ընդհանուր ժողով կ'ընտանալու և հան-
դանակութեան նոր ձև մը կ'որոշուի : որուն չին մասնակցիք ա-
ռաջնոյն հեղինակները՝ միշտ խոչընդոտն յարուցանելու դիմամբ :

Դիւրին է բմբռնել ժողովի մը մէջ դիմադիր մաս մ'որ միշտ օրինաւորութեան սահմանին մէջ կ'մաքառի և հոսկի ուրեմն մեծամասնութեան որոշումին կ'հպատակի . սակայն ժողովէն զուրս կուսակցութեան մը հանած նիւթական դժուարութիւններն անխշխանութեան յորդորներ են և դատաւարութիւն : Յաւ է ըսել որ այս պարագան ստէպ կ'սպասահի մեր մէջ . անձնական ոխ , շահ , հեռ , շատ անգամ այս կամ այն կուսակցութիւնն անիրաւութեան կողմը կ'քշեն և ասով անհամար փեաններ կ'ծաղին ժողովրդեան համար : Այլեւի թէ այս է սեղմալ հասարակութեան մը ճակատագիրը կամ մեր ժառանգական ախար , անմիաբանութեան դրին : Այլ փոքր քաղքի մը մէջ մարդիկ մեծ չլինին , այսինքն սկզբունք չսիրեն , հաստատ բնաւորութիւն և լոյս չունենան , անդադար կ'երեւան , մանր մանր բաներով կ'վրդովին , երկրորդական կարգի պատճառներով դիւրաւ կ'ըզածուին և որ և է աղկային խնդիր ընդհանուր տեսութեամբ դատելու անզօր կը դառնան , մինչդեռ մեծ քաղքի մէջ՝ որչափ աղետ լինի ժողովուրդը՝ մասնաւոր նկատումներ չեն գոյանար , և եթէ երբեք գոյանան , անհատական կրից անհիմն ճիշտ հանրութեան դրոտալիք ձայնէն անխելի կ'մնան կամ կ'մարին :

Ահա հասանք այն կէտն՝ ուր Սահմանադրութեան կամ օրենքի տէրքն անհրաժեշտ և ուղղակի ծանր երկարաւիտութեան մը դէմ պատուար մը պիտի դառնայ : Երբ՝ ըստ սովորութեան՝ համորդ վարչութեան անդամներն՝ անցեալ ամիս՝ կ'հրաժարին , անոնց անդ նորեր , կ'ընտրուին ընդհանուր ժողովի մը կողմէն* : Նորընտիր ժողովականներէն ոմանք հրաժարական կ'տան , այլը կ'ընդունին կամ անտարբեր կ'մնան : Ասոր վրայ անհամաձայն փարսեթիւն ստորադրութեամբ յայտարարութիւն մը կ'ելնէ , սա մասը թէ՛ վարչութեան նորընտիր անդամները հրաժարած լինելով (թէ և իրօք ամենքը հրաժարած չէին) հարկ կ'լինի յաջորդներ ընտրել , և եթէ Ս . Աւաջնորդին ընելիք հրահրին անձամբ պատասխան չտրուի և Ընդհ . ժողով չգումարուի , սոջի տարւան Ընդհ . ժողովին որոշումը թէ՛ զպրոցները 40 հազար զուրուշով մատակարարուին՝ ի գործ պիտի դրուի , օտար լեզուներու ու

* Հարկ է գիտել որ քանի մը տարիէ վեր քաղքին Ընդհ . ժողովներն անկանոն կերպով փոփոխուելն և անոնց կազմութիւնը՝ չէ թէ որոշ կանոնի մը՝ սլլ ըստ հաճոյս յօրինուած զոչոյթի մը համեմատ կ'աւարուի :

սումը պիտի վերնայ և ազգային գործերն անխնամ պիտի մնան։ Առժամանակեայ վարչութիւնն, ինչպէս ամէն պատգամ, այս երկդիմի պատգամը տալէն ետեւ՝ Ս. Առաջնորդը ժողով կ'ըն-
մարէ և նոր վարչութիւն մը կ'կարգուի։ Նոյն ժողովին մէջ
գծադրութիւն մը կ'ծաղի. ոմանք կ'պնդեն թէ նախորդ ժողովն ա-
պօրինաւոր էր, այլք նոր ժողովին որոշումներուն դէմ կ'բողո-
քեն. թէ և ըստ մեզ՝ քանի որ երկուքն ալ սահմանադրապէս կազ-
մուած չէին, և ոչ մին օրինաւոր էր։ Ս. Առաջնորդն այս վէ-
ճին օր ըստ օրէ սաստկանալը նկատելով՝ նոր ընտրութիւնները
հաստատելու կ'վարանէ և ՚ի վերջէ երկու կողման ալ կամքը
կատարելու կ'մերժէ, օրինաւորութեան միջոց մը փնտռելով։ Օ-
րինաւորութեան միջոցը Սահմանադրութիւնն էր, ամէն կուսակ-
ցութեան, անմիաբանութեան վերջ տալու միակ դարմանը Սահ-
մանադրութիւնն էր. վասն զի Ս. Առաջնորդը, և նոյն իսկ ար-
դարանքութեան հրեշտակ մ'ի՞նչ վճիռ որ տար կողմնապահու-
թիւն պիտի համարուէր և վէճը պիտի զլայրանար, մինչդեռ
Սահմանադրութիւնը կրնայ ամենքը ղոհ ընել, քանի որ ոչ Պօ-
ղոսի և ոչ Պետրոսի կողմ կ'բռնէ. Սահմանադրութիւնը մէկ
կողմն ունի, այս է արդարութեան և օրինաւորութեան կողմը։

Ամէն ողջամիտ և ազգին օգուտը սրտանց փափաքող հայ Ս.
հօր այս խոհական ընթացքը պիտի զովէ անշուշտ և անոր ա-
ջակից պիտի դտնուի։ Նախնական ճշմարտութիւն մ'է որ ա-
ռանց օրէնքի որ և է ընկերութիւն չէ կարող քալել, թող
թէ հասարակութիւն մ'որ վանազան ազգային շահեր ունի պաշտ-
պանելու։

Այս նպատակաւ Ս. հայրը Սահմանադրութիւն ձեռք կ'առնու
և զայն գործադրելու կ'տրամադրէ։ Թէ և ինքնին կարող էր Ըն-
դհարդական Ժողով մը սահմանել՝ ընտրական գործողութեանց պատ-
րաստութեան համար, բայց որպէս զի ամէն կողմնապահութեան
կասկած փարատի, հին դրութեամբ կազմուած Ընդհ. ժողովի
մը միջոցաւ Ընդհարդական կ'կարգէ, որ արդէն ընդ նախադասու-
թեամբ առաջնորդական փոխանորդ Քէնդգ վարդապետի քանի
մը նիստ ըրաւ և իր պաշտօնն աւարտելու վրայ է*։

* Ընտրողական Ժողովն հին և նոր Սահմ. իրեն առաջնորդ բռնելով՝ ար-
դէն իր հրահանգն ուղղեց ընտրողաց՝ որք ամսոյս 29ին հրախրեալ են իրենց
իրաւունքը գործադրելու։ Գաւառական ժողովը 50 երեսփոխանէ պիտի բաղ-
կանայ. 30ը Չմիւռին պիտի ընտրէ 20ը թեմերը։ Ընտրող է 25 տարեկան և
դէթ 30 զուլ. ազգային կամ պէտէլէյի տուրք վճարողը, մինչև որ նոր Սահմ.
հաստատութեամբն ընտրողութեան պայմանը իւրին որոշուի։

Ընարողական ժողովոյ անդամք են ,

Մեծ. Մ. Աղաթօն էֆէնտի

» Դ. Պալթազարեան էֆէնտի

» Գր. Ասլո »

» Դր. Չիլինկիրեան »

» Հ. Շահվէրիլեան »

Մ. Մամուրեան

Զմիւռնացիք, սթամբիլիք, ձեռք ձեռքի տանք, անձնականութիւն մոռնանք, և մի միայն ազգին սիրովը վառ՝ յառաջ անցնինք և խղճի մտօք մեր պարտքը կատարենք : Թող մեր հեռաքնակ հայրենակիցները չկարծեն թէ անգղայ ենք մեր իրաւանց և յառաջադիմութեան : Մեր նիւթական և բարոյական վիճակն ուրիշ տեղերու հետ բաղդատելով մեծ առաւելութիւններ ունի . ջանանք սոյն առաւելութիւնները բեղմնաւորել և օրինաւորութեան ճամբան բռնել : Հակառակութիւնը միշտ նոր վէրք մը բացած է մեր ազգային մարմնոյն վրայ, թող անցեալ դառն փորձառութիւնները մեզի խրատ լինին : Մեր անձնական վէճերու համար ասպարեզն ազգային պաշտօնատունը չէ : Շարժինք, շարժումը կենդանութեան նշան է, վիճաբանինք, վիճաբանութիւնը մտածութեան նշան է, պատերազմինք, բայց մի միայն ազգային օգտին համար, մի միայն մեր ապագայ լուսաւորութեան համար, և մեր զէնքերը լինին բանականութեան, օրինաւորութեան, արդարութեան զէնքերը : Այն ատեն, և միայն այն ատեն կրնայ Զմիւռնացին իրեն արժանի դիւրքը գտնել և համայն ազգին մէջ մեծ և կենսատու պաշտօն մը վարել :

ՊԱՐԵՏ

ՊՈԵՄԱԼՈ

Ներքոյա Պոեմալօ Տէրբէօ այն հաղուագիւտ և ընտիր գրիչներէն մէկն է, որք Ֆրանսայի 17^{րդ} դարու ոսկեղինիկ մատենագրութեան մէջ նշանաւոր տեղ մը բռնած, և գրական աշխարհի վրայ իրենցմէ ետև լուսաւոր անջինջ հեաք մը ձգած են: Իր դովեասն իր անուան և զործոց մէջ է: Կիրթ ճաշակի տէր՝ կիրթ ճաշակի պաշտպան և օրինակն էր նա, ու անոր դէմ մեղանշող հեղինակներուն ռիսերիմ ու անհաշալթ շնամբն, զորս իր նուրբ և սուր երդիծաբանութիւններովն անդադար կը ծաղկէր ու կը նշտակէր: Իր ըրած գրական յեղափոխութեամբն և ամեն տեսակ քերթողութեանց վրայ զրած ճշդ լիա կանոններովն ու սահմաններով՝ Պառնասի Օրէնադիրը կրնայ անուանիլ: Իր Երգեծանոթիւնք (Satires), իր Կամախլե ճառերք (Epitres), իր Արտէսար Բերթղականք (Art Poétique) և իր Գրակալ (le Lutrin) կոչուած գիւցաղնա-կատակերգակ անսման քերթուածք՝ յարգ ու վարկ պիտի ունենան յառիշտն, քանի որ զեղեցիկն ճաշակը պիտի մնայ, և չալիտի կորստի աշխարհի երեսէ:

Չարմանալի է յիրաւի որ տակաւին մեր ազգին մէջ Պոեմալօյի զործոց թարգմանիչ մը չդանուեցաւ, զորս մերացնայք օգուտով և հետաքրքրութեամբ պիտի կարդային: Մենք իբր մէկ խիստ պղտի օրինակ մը իր սուր և աշխոյժ գրիչին՝ իր Աթերորդ Երդիծանութեանը թարգմանութիւնն ըրինք, որ եթէ արժէք մ'ունի երբէք՝ ան ալ, կարծենք, իր հարադատութեանը մէջ է, զոր ամէն կերպով պահելու ջանացած եմք: Այս Երգիծանութիւնս, որ մարդկային մոլութիւններու վրայ դժկամակ տխուր փիլիսոփայ մը կը քուցնէ, և զոր ինքը Պոեմալօ Մարգարէ Երգեծանոթիւնք անուանած է, 1667ին յօրինուած, և ինչպէս խորագրէն կը տեսնուի, Պ. Մորելի ուղղուած է, որ Աստուածաբանութեան վարժապետներուն ամենէն հինն, և Բարիլի աստուածաբանական կանոնիկոսն էր:

Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԵՐԳԻԾԱՆՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒՂԱՅԱՆ

ԱՌ ՊԱՐՈՆ ՄՈՐԵԼ

ՎԱՐԻԱՊԵՏ ՍՈՐԳՈՆԻ

Ի կենդանիս առ հասարակ՝ որք յօղս լուչին,
 Լողան ի ծով և կամ երկրի վրայ ասորին,
 Հռովմէ-Ճափոն և Բերուէ մինչև Բարիդ,
 Յիմարագոյն ո՛հ կենդանին մարդն է՝ ըստ իս :

Ի՞նչ, ի սկզբան պիտի գոչեն, որք մի, մըջլուն,
 Կիսովին միայն ասորդ անարդ սողուն, զեռուն,
 Ցուլ որոճուլ, այծ անածուող, միթէ մարդէս
 Ուղղադոյն միտք ունին երբէք : — Անշուշտ այնպէս :

Խօսքերս, տեսնեմ, զարմացընեն քեզ վարդապետ*
 Մարդրս, կ'ըսես, բնութեան տէր ու վեհասէս,
 Կենդանի, դաշտ, անտառ ու մարդ իրեն համար,
 Եւ ի՞նք միայն բաժին ունի խելք, միտք, հանճար :
 Իբրեւ է խօսքդ, միշտ իր բաժին բանըն վնեմ,
 Այլ ճիշդ ասկէ իր խնթ մ'ըլլալն հետեցընեմ :

Երգիծանքի մէջ, պիտ' ըսես, խօսքեր այդ քու
 Աղէկ են նախ շէն ընթերցուլ մ'զբօսցնելու,
 Բայց կանոնով հարկ է զանոնք հաստատել : — Լաւ,
 Պատասխանէ, ինձ վարդապետ, ուրեմն կարդա :

Իմաստութիւնն ի՞նչ է : Հողւոյ այն մի վիճակ,
 Միշտ անխռով, զոր չյուզէ ո՛չ մի փափաք,
 Որ Գահերէց մը** զալատին տափճաններն
 Ելնելէն իսկ՝ զանդաղ վարէ իր խորհուրդներն :
 Իմաստութեան արդ սոյն վիճակն հարթ հաւատար
 Ո՛վ կայ մարդէս ասելի քեզ ճանցող յիմար :
 Մըջլուն ընդ անդս ճամբորդելով ամէն տարի

* Յայտնի է որ Երգիծանութեան մէջ հեղինակն իր խօսքերը միշտ զ
 Մօրերի կ'ուղղէ :

** Doyen, Հոս խօսքը խորհրդաբանի Գահերէցին վրայ է :

Պերճ գանձերով ճոխացընէ զինք Դեմետրի .
 Եւ երբ հիւսիս մեզ բերելով ցուրտ եղանակ՝
 Սեաւ մշուշով զայ բնութիւնն տխրել համակ ,
 Իր մութ խորշին մէջ կծկուած այս կենդանի՝
 Չմեռն կ'ուտէ հաւքած պաշար յամառայնի .
 Բայց անհաստատ բարձր մի բնաւ չի ցուցուներ .
 Ամառը ծոյլ ըլլալ , ձմեռն աշխատասէր ,
 Բաց դաշտի վրայ Յունվարի բուք դիմադրաւել ,
 Կամ թէ խոյի դարձին* ատեն ձեռքերն կ'ապել :
 Այլ մարդս իր խօլ զընացքին մէջ չ'առնելով դուլ՝
 Մտածմունքէ մտածմունքներ կ'անցնի անդուլ :
 Տաղնապներու մէջ բիւրաւոր իր սիրտ յուզուած ,
 Ո՛չ իր ուզածն գիտցած ունի և ո՛չ չ'ուզած :
 Այլոց տանջանք , ինքզինքին իսկ նեղութիւն , վիշտ ,
 Զերդ նորելուկ՝ իր խեղճ միտքն ալ կը փոխէ միշտ :
 Փոքրիկ հովի դառնայ , ընկնի փոքր հարուածի ,
 Ի սաղաւարտ այսօր և վաղն յեկեղեցի :

Սակայն զանի տեսնես թեթեւ շողիներով
 Լե՛ օրորել ինքզինք իր խօլ կեղծիքներով՝
 Ի՛նքն է , լոկ ինք հիմ բնութեան , նորա պաշտպան ,
 Եւ տասներորդ երկինք** յիւր սակա դառնայ մի միայն :
 Կենդանեաց ի՛նքն է թաղաւոր և տէր , կ'ըսէ :
 — Ո՛վ կ'ուրանայ , զոչես և զու : — Ո՛հ , ես զուցէ :
 Սակայն առանց գիտելու թէ խոռոչներ խուլ՝
 Ա՛րջըն զմարդ կամ մանրդ զարջ երբէք տայ կուլ .
 Եւ կամ Նուսիոյ հովիւք եթէ հրաման հանեն՝
 Պարբայի*** սէգ առիւծք չուե՛ն Լիբիայէն ,
 Այս կարծեցեալ տէրս որ անոնց օրէնք կու տայ ,
 Այս մեծ իշխանս քանի՛ իշխանք չունի իր վրայ :
 Փառք , սէր և ոխ աղահալութիւն իբր յանցաւոր՝
 Շղթաներով պրկեն իր միտքն տարժանաւոր :
 Հաղիւ իջնել աչացը վրայ կ'սկսի քուն՝

* Գարաւա դարձին :

** Էին առաջարկել որչափ տարբեր շարժումներ տեսնէին աստղերու վրէպ , այնչափ ալ երկինքներ կ'ենթադրէին . ասով Եօթն մոլորակներուն համար Եօթն երկինք կը հաշուէին . մինչև 70 երկինք հաշուողներ կային :

*** Պարբայ՝ Պարսպարիայի անապատ և աւազուտ մէկ մասին անունն է :

Օ՛ն, ոտք ելիւր, կ'ըսէ նմա աղահուսիսն ։

— Ո՛հ, թող ինձ ։ — Ո՛տք ։ — Է՛հ, պահ մը միայն ։ — Պա-
[տասխան տաս ։

— Դեռ մի քանի հրպակք հազիւ բացուած են հազ ։

— Հող չէ, ելիւր ։ — Բայց վերջապէս ինչ ընելու ։

— Մէկ ծայրէն միւսն արշաւելու Ովկիանու ։

Մինչև ճափոն՝ յախճապակի, սաթ որոնել,

Եւ կայէ* երթալ Ժէնէֆօյը, պղպեղ բերել ։

— Բայց պէտք չ'ունիմ, ինչքեր են իմ եւել եւել ։

— Ի՛նչ որ ունիս՝ քիչ է ։ Եւ ինչք առ 'ի դիղել՝

Ո՛չ ոճիրներ, ո՛չ սուտ երգում պէտք է խնայել,

Պէտք է նոթի մընալ, հողի վրայ ննջել,

Կալէի** իսկ կորուսած բաղդ մէկն ունենայ՝

Բնաւ, երբէք չպահել տունն կազմած, ծառայ ։

Հասկերու մէջ դէղ դէղ՝ հաճար, դարի ուտել,

Եւ մէկ բէալի սիրոյն նաև կեանքը զոհել ։

— Եւ ինչ օգուտ այս խնայութիւն ։ — Չգիտես միթէ,

Ձի ժառանգորդը հազուի, կապուի, ուտէ, խմէ,

Քաղէ օգուտ չգործածած քու դանձերէ,

Եւ աղմկոյն օր մ'ըքաղաք տաղտկացունէ ։

Հարկ է մեկնիլ ։ Նաւաստիներ կազմ՝ պատրաստ են ։

Կամ եթէ դանձք չ'ունին հրապոյր որ զինք մոզեն՝

Ահա խմբով իրեն բոլոր՝ փառքերու տենչ

Դայ և բունի զինքը դտնէ հանդստին մէջ,

Ձերդ կատաղի՝ արկածներու մէջ նետէ զան,

Ինքզինք խեղել Կեսարներու մոլար ճամբան,

Եւ խրամատին վրայ բլլալով էշ-նահատակ՝

Թերթերու մէջ խենթ քաջութեան մը տալ հռչակ ։

— Կեցի՛ր նայինք, պիտ' ըսէ մէկն, 'ի ճահ հեղին ։

Վեհ գիւցազանց այս մոլութիւնըս բաժին է ։

Ի՛նչ, քու խելքով Մեծն-Աղեքսանդր ուրեմն խենթ մ'էր ։

* Արեւելեան Հնդկաստանի մէջ Բորթուկալցոց ունեցած երկիրներուն մայրաքաղաքը ։

** Երևելի խնդամուլ, որ խաղերու մէջ անբաւ դրամ շահեցաւ և յետոյ կորոյս ։ Բարեգի մէջ Սէնդ—Անդուան փողոցը Սիւլլիի ապարանքը շինել տուած էր, բայց մէկ խաղով ձեռքէ հանեց զայն ։ Կը պատմեն թէ իր բոլոր ինչքը կորսնցնելէ վերջը՝ կ'երթար ծառաներուն հետ և նոյն իսկ ժամանակաւ իրեն եղած տան սեմերուն վրայ խաղ կը խաղար ։

— Ո՛ր, այն փախուկն որ Ասիան դարձուց աւեր,
Այն ծարաւին արեան յաւէտ, անդուտդ, վայրագ,
Որ նեղ գտնէր աիրած աշխարհքն բովանդակ:
Այն կասաղին որ պետ ծնած մէկ դաւառի,
Զոր յանձանձել կարող էր իբր արքայ բարի,
Ելաւ անկէց, և կարծելով զինք մէկ Աստուած,
Անտուն անտեղ գողի մը պէս վազեց, զընաց,
Եւ տանելով իր հետ աղէտը պատերազմին,
Լեցուց զաշխարհ խենթութիւնով իւր ահագին:
Մեծ պատճառովք բխր՝ երանի թէ գտնուէր
Իր ժամանակն ի Մակեդոն խենթանոցներ,
Եւ կանուխեկ խնամակալ մի լրջաբար՝
Ծնողաց կամբով զանիկա հոն գրած ըլլար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՍՄԱԿԱՆԻ

Կ. Պոլս., Յուլ. 23—67.

Աշէլ- Բարեկա՛մ,

Նրբ օթեկին մէջ՝ դիմակաւոր Շամիրի մօտ նստայ՝ անհամբ
բեր անոր ախանջ աուի: — Որմէ՞ սկսիմ՝ նկարագիրս, ըստ
նա, ահա շատ մ'երեւելի և աներեղթ հայ զլուխներ կ'ստատա-
նին անդուլ տա վարի շէն սրահին մէջ և մեզի ողբան փոքր
կ'երեւին սոյն բարձրութենէ: Յեզ, կարդ, զատ չլան այս պա-
րահանդիսիս մէջ, ամենքն արտաքուստ հաւատար են, ամենքը
նոյն նպատակն ունին, այս է զըօսնուլ, ամենքը սփսփում կը
փնտեն, կ'շարժին, հող, վիշտ, աշխարհ մոռնալով: Իրենց
սիրտն Աստուղիկն, և ունին Անդուլին ուռած՝ մերթ մեղեդին
շրջապարի մը պտոյտներով կ'արբշտին, կ'թաւալին, մերթ քառ-
բիցի մ'եւէջ շղթային մէջ յամրաբայլ կ'նազին, կ'յարին ու
կ'խորշին, մերթ այլ և այլ վատշուէր և փարելի ձեւերով պար կը

բունն, կ'զայթեն, կ'մրցին ուշաթափ . . . : Այս է Պաքոսի տաճարը :

Այս տեղ բանահիւսն իր քնարը կ'խորտակէ և ծնծղայն լաւագոյն կ'սեպէ, ճարտասանն իր լեզուն կ'կտրէ և սլաքեկի (fée) մը հետ թոթովել կ'սիրէ, իմաստունն մամսի կարգը կ'անցնի, բժիշկն իր նշտրակը կ'թողու ու Առաքիտանի աղեղն ու կապարճը կ'կախէ, կրօնականն իր կնդուղը կ'հանէ կ'նետէ և Աօվլաս մը կ'դառնայ, քաղաքագէտն իր Բանտորի տուփը կ'դոցէ սլահ մը և Դիողինէսի տակառը կ'մանէ . . . :

Բայց կ'սխալում, ահա տես սա մարդն որ անպատկառ տուփ մ'ունի ի ձեռին, քթախոտի տուփ մը, թէև հայ քաղաքագէտ, օրէնսդիր, ատենաբան, մեծ մարդ է այն : Միթէ ատեսոր դանի, հեռուն սինի մը կ'թնէր մէկ քթախոտ կ'քաշէ, մէկ կ'ատեն նաբանէ : մինչդեռ նուազաբանները կ'որոտան, յաւերժահարսունք կ'թռնին, սրահին փոշին և սրտերու մէջ փոթորիկ կ'հանեն, նա կ'թնած սինին պէս անդրդուելի կ'մնայ, էհ : ինչ փոյթն է : երկին անդամ դուայ, աշխարհ իրար անցնի, միթէ նա իր տուփը, լեզուն և քանի մ'ունկնդիրներ չունի, այս բաւ է, մնացածը ստուեր, պատբանք են աչքին : Իր տուփը վսեմ խորհրդոց դարան, խօսքը Տելֆեան պատդամ, ակնարկը պէտք է լինի Արամազդայ հրաման, զի ամենքն անոր անջև կ'խոնարհին : Թղուկ մը կ'երևի իր բոլորակքը կեցող ունկնդիրներու մէջ, այլ հսկայ մ'է մտքով : Երկու շարժուն, հրացայտ մանր աչքեր իր բնաւորութեան հայելիներն են . թէև արբուն հասակ, ճաղատ զլուխ, ցաւադար մարմին ունի, զեռ աշխոյժն է պատանեկան : իմացականութիւնը բերրի և ճապուկ, հնարագէտ յանդիմութիւնն աննկուն :

Ստորին վիճակէ ոստոսութեամբ հասեր ելեր է այն բարձր կայութեան ուստի ինչեւէ կ'աշխատէ այս նոր Օգտավիանոսը, վաճառ զի անդ կ'տաղտկանայ, իր ճարտարութեան համար ասպարէզը խիստ նեղ կ'զանէ, և քաջ զիտէ որ եթէ Իտալիա զտնուէր Մաքիավելլ մը կ'լինէր : յԱնկլիա՝ Բիդ մը, Ֆրանսա՝ Թալէյրան մը, իսկ Թուրքիոյ մէջ պարզապէս ազատաբան Եզդուս մ'է, տիպոս մ'որով տաճկաց քթէն կ'բռնէ և անոնց թերութիւնները կ'հեղնէ : Մի կարծեր թէ ուրիշներուն պէս արտաքին շուք, նշան, փայլ ունի նա, ոչ . սակայն շքանշան, գիրք :

անծուծիւն ունեցող նախարարներն անդամ անորմէ կ'դողան ,
 անոր բարեկամութիւնը կ'փառասիրեն , ակնարկին կ'կարօտին ,
 վասն զի զիսեն անոր թաղուն այլ աղղու զօրութիւնը : Իր յա-
 տուկ արհեստին բերմամբը՝ ոչ միայն աւաղանիին , այլ նոյն իսկ
 վեհապետին կրնայ մօտիլ անվեհեր՝ իբր առ ընկերն , և եթէ
 իր արհեստին պէտքն անդամ դադրի , իրեն յատուկ հրապու-
 ըելի տաղանգով , տեսակ մը բնասիւյ հանդամանօք (originalité)
 իր ներկայութեան պէտքը չդադրիր : Ամէն անձի , տեղի , պա-
 րագլխի յարմար բառ մը , զրոյց մը , մանր վէպ մ'ունի շրթե-
 բուն վրայ , որոյ իմաստասիրական դոյն մը կ'ապ : Ամէն խնդիր
 կ'ըջափէ կ'անցնի ; ամէն կրճիմ՝ լուծելու հնար մ'ունի , ամէն
 վէրք բուծելու գարման մը , ամէն մարդու և բանի մէջ ինք-
 զինք պետ ու ձեռնհաս կ'նկատէ , սակայն մինչ ցարդ՝ հաստատ
 սկզբունքի մը , լեռնին կատարած մեծ գործի մը , զուտ հայրե-
 նասիրութեան մ'արկիւնքը ցոյց տուած չունի . կէս գարման-
 ներ , կէս որոշումներ , կէս խորհուրդներ , կէս խօսքեր , ահա
 իր բոլոր վարպետութիւնը . լոկ բանի մը մէջ կտրուկ է , այս է
 անձնական շահուն . լոկ կուտք մը կ'սխալէ , այս է ոսկին . լոկ
 քաղաքականութիւն մ'ունի , այս է նորը հինին հետ կարկսել :
 Բունութեան թշնամի՝ երբ անոր գէմ շանթէ կարծես թէ շղղ-
 թմանեղ պիտի քակուին , բայց բռնասէր է իր մտերիմներու
 հետ և մերթ քսու : ամէն ազատական կարծեաց քարոզ՝ բայց
 կ'հալածէ նա , մինչև անդամ ճղմելու կ'ճգնի օձապրոցա ճամ-
 բով՝ իր դրութեան դիմադրող միամիտը : Փառասէր և զահա-
 սէր՝ իր նպատակին հասնելու , ժողովրդականութիւն շահելու հա-
 մար՝ մինչև անդամ բարիք կ'ընէ : Հայոց Սահմանադրութիւն մը
 տրուելու ջանադիր կ'զանուի , ինքն իսկ զայն կ'մբաղդէ , կ'հաս-
 տատէ , կ'փայլի , կ'սխալուի , ժողովրդեան սրտին վրայ կ'տի-
 ղէ , սակայն մէկ ձեռքով տուածը միւսով ետ առնելու կ'աշխա-
 տի՝ երբ կ'գիտէ որ իր աստղն ուրիշ արեւներու առջև պիտի
 մարի . . . : Աներեղծ թեւեր կ'շարժէ , Սահմանադրութիւնը քա-
 նիցս արաթուր կ'կտի , իշխանապետ (dictateur) կ'կանգնի , և
 այն ող երբեմն ամբարշտական բռնակալութեան գէմ թուք մ'էր ,
 անսահմանադրասէր պատրիարքի մը սարսափն ; և ժողովրդեան
 տրիբունն , ակնթարթի մը մէջ իր բանակը կ'թողու և էրէտուն
 բռնատրայ կարգը կ'անցնի : Եւ իբր բռնաւոր՝ պէտք էր իր կա-

րեվէր ինքնասիրութեան անմեղներ զոհեր, Ազգին մէջ ապրեալ տամբական ողի նշմարէր և ապա՝ իբր օտար և անմասն աղէտալի անցից՝ մէկզի քաշուէր և Գամիլոսի սէս զոհէր. « Տարերկին որ հայերն իմ սէտքս դէպին » : Մակայն տարիներ անցան, և տակաւին այս սէտքն զգացող մը չէլաւ, վասն զի ժամանակիս սէտքը փառամով ժողովուրդն զգուել չէր, այլ ժողովրդեան մարմնոյն վրայ բացուած վէրքերը դարմանել : Այս մեծ գործը Տրադիպուլ մը կատարելու վրայ է :

Եւ ահա այն մեծ հանձարն որ զեթէ քսան տարի՝ մերթ իբր վերանորոգիչ (réformateur), մերթ իբր օրէնսդիր, ազատութեան և Սահմանադրութեան կարապետ՝ այլ վերջէն իբր բռնակալ և պետական պատահարներու պարագլուխ՝ ազգային կառավարութեան ղեկը վարեր էր, այսօր կ'զանդատի ազգին տպերախտութեան վրայ, կ'ողջայ որ իր մատուցած ծառայութիւնները չեն ճանչցուիր, և տարակոյս չունիմ որ այս պահուս իսկ քանի մը հինօրեայ մտերիմներու՝ որ երբեմն իր ռոտիններն էին, կ'հաղորդէ ազգին վերաշինութեան համար նորէն երկնած խորհուրդներն և ապաղայ յատակադիծներն՝ որով լի են իր լիզմակալը, ինչ հայրենասէր մարդ... :

Ա. ԲՈՅՐ

ՀԻ՞Ն ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԹԷ՛ ՆՈՐԸ

Ո՛ր կ'տանի մեզ Կեդրոնական Ընդհ. Ժողովն՝ որ ութ ամիս վեր կ'նստի կ'ելնէ և տակաւին ոչ միայն զալի քայլ մ'ըրած չունի, այլ և կարծես թէ՛ յետս կ'ընկրկի : Բայց անոր ատենադրութիւնները, կարգաւ անոր խնդրոց կարգը, զիտէ անոր շարժումները, քննէ անոր ողին՝ և ուրիշ բան չպիտի գտնես, բայց եթէ՛ քանի մը բացառութեամբ, յաւիտեական կրկնութիւններ, անլոյծ և օթեկ խնդիրներ, մանկային ուսուսումներ և զիտողութիւններ, անձնական բանակութիւններ, և որ մեծն է, հակառական որոշումներ :

Եւ այս Ընդհ. ժողովն ազդին բարձրագոյն ատեննը պիտի լինի, և այս Ընդհ. ժողովն օրինաւորութեան, ձեռնհասութեան և իմաստութեան հանդէս պիտի դառնայ, և այս Ընդհ. ժողովն ազդին վստահութիւնն ու համարումը պիտի զրաւէ, բարոյական և նիւթական անհամար աղէտներ պիտի բուժէ: Ի՛հ, լաւագոյն էր որ ինչպէս երբեմն, իր ձայնն ինքը միայն լսէր, իր ատենագրութեանց միջոցաւ շատ մը թերութիւններ երևան չհաներ, և դէթ ասով բարոյական շինովի ազդեցութիւնն առ երեսս պահէր:

Իրաւի թէ Զեյթունի լռութեան համար զի իր ժողովատեղին նուիրական տաճար մ'որուն պաշտպան հայրապետին շնորհաց կ'կարօտի ժողովականաց մեծ մասը: Ի դուր կը կոչէ Երեմիա և սպառնալից ղուշակութիւններով մեր երեսփոխանները զգաստութեան յորդորելու կ'տքնի, ընդունայն կ'աղաղակէ և Հայրիկն թէ՛ ժամ է 'ի բաց թողուլ մանր մունր խրնդիւրներ, և մեր ակնարկն Հայաստանի աւերակաց վրայ դարձնել, Ընդհ. ժողովն իր անձուկ և անեղ ճամբան կ'շարունակէ անմիտադիր՝ մինչև որ իր զլուխը պատի գարնէ... և յայտնի ու անյայտ թշնամիներով՝ որ օրն 'ի բուն անոր կործանման կ'աշխատին՝ քրքիջը շարժէ...:

Բաց ինչպէս կ'մոռնայ սոյն նորակազմ Ընդհ. ժողովն իր նախորդին ամլութիւնն ու աղշովին կրած դատապարտութիւնը, ինչպէս կ'մոռնայ որ շատ շատ մեծ պատասխանատուութիւն մը ունի նա ազդին առջև, և երբ դատաստանի օրը գայ՝ ինչ գործ, ինչ արդիւնք պիտի ներկայացնէ այս իր արդի ընթացքովը. միթէ իր ատենագրութիւնները պիտի ներկայացնէ, որ բաց 'ի քանի մ'ընտիր ճառերէ, վաւերացման դործողութիւններէ, և Սոյ կաթողիկոսական որոշումէն՝ որուն դործադրութիւնը գեւ պիտի տեսնենք, անհետքի, ամուլ և փծուլ վէճերով կ'փայլին: Այս բաւական չէ, իր 217 նստին մէջ Ընդհ. ժողովը կ'ընէ ինչ որ նախորդ քանի մը նիստերով որոշեր էր և ասով իր զգոնութեան չափը կ'յայտնէ:

Ինչ է այս վճիռն, ինչ անոր զրդիւր. համառօտ պատմենք:

1866 մարտի 22ին բարձրագոյն հրամանաւ ազդային Սահմանադրութիւնը դադարելն ետև՝ Բ. Գուռը յանձնակումբ մը կը կազմէ տիրօրէն և հին Սահմանադրութեան վերաքննութիւնն

անոր կ'յանձնէ : 1868^{ին} ալ Ընդհ. ժողովով ուրիշ յանձնա-
կումբ մը կ'կազմուի և առաջնոյն քննածն ինքն ալ կ'վերաբըն-
նէ , ուստի կ'ծագի 1870^{ին} վերաքննեալ Սահմանադրութեան
ծրագիրը : Սոյն ծրագիրն արդի Ընդհ. ժողովին մէջ 'ի քնին
առնլու կ'որոշուի , և սոյն որոշման համեմատ՝ նախ թաղական
մատակարարութեան մասը , ապա ընդհանուր տրամադրութիւն-
ները նկատողութեան ընկած ատեն՝ յանկարծ՝ երեսփոխաննե-
րէն Իփէկճեան էֆէնտին՝ նոր խնդիր մը կ'յուզէ և կ'հարցնէ
թէ՝ արդեօք վերաքննութիւնը հիւն թէ՛ նոր Սահմանադրութեան
վրայ ընելն է օրինաւոր : Այս խնդիրը գիւսանին անհեռատես
թողլուութեամբն օր քան զօր կ'բորբոքի , քանի մը քաջախօս
և հնարալէտ պաշտպաններ կ'դանէ , ինչպէս Ապրօ էֆէնտին՝
որ յարձակումը կ'ուղղէ և գիւսագիր մասին ոյժն աւելցնելու
համար ժամանակ շահելու կ'յաջողի . Պէկեան էֆէնտին՝ որ իր
տրամաբանական ազդու ուժով պետական պատահարը կ'հարուածէ
և ծրագիրն՝ իբր նոյնին անհարազատ ծնունդը՝ կ'հերքէ , կ'մեր-
ժէ . Փափազեան էֆէնտին՝ որ իր վառվռուն երևակայութեամբ
պետական պատահարին հեղինակները զատաստանի կոչել և դա-
տարաբէ կ'առաջարկէ , և հետզհետէ գիւսագիր կողմը զօրանա-
լով՝ Եռսուֆեան էֆէնտիի խիստ բանացի , Օտեան էֆէնտիի
մերթ հաշտարար , մերթ պաշտպանական լեզուին , Խօճասարեան
էֆէնտիի փոքր ինչ վերացեալ առարկութեանց հակառակ՝ վե-
րաքննութիւնը հին Սահմանադրութեան վրայ կ'որոշուի :

Այս ծանրակշիւ որոշման առջև պահ մը կանկ կ'առնունք և
անոր մէջ շտապի , անխոհեմութեան և դադանի կրքի մը նշան-
ները կ'նշմուրենք : Եւ չկարծուի թէ՛ սոյն որոշումը քննադատե-
լով՝ անմեղագիր ենք պետական պատահարին և նոր Սահմանա-
դրութեան կոյր սիրահար , ոչ . վասն զի՝ թէ՛ միոյն դէմ՝ իբր ազ-
գայնաս և բուն իրողութիւն մը , և թէ՛ միւսին դէմ՝ իբր ան-
ոճ և շատ մը թիւր տրամադրութեամբ լի օրինացի մը՝ առաջին
բողոքողներէն մին եղած ենք : Սակայն որչափ պակասաւոր լինի
նոր ծրագիրը՝ մեր անկողմնասիրութիւնը կ'գրդէ մեզ ազգային
օգտակարութեան տեսութեամբ նկատել այն որոշումն և անցեալ
աղէտալի իրողութեան դէմ՝ գիւսագիր մասին (opposition) ցոյց
տուած արդարացի զայրոյթն ու դատապարտութեան խորհուրդը
դովեւելով բռնած ընթացքին անպատեհութիւնը նշանակել :

պետական պատահարին, ասիլից ծագած թշուառութեանց, միով բանիւ քանի մ'ինքնասէր և բռնամոլ անձերու պատասխանատուութեան բեռը՝ նոր ծրագիրը խմբադրող յանձնակմբին կունակը դնել և օրինաւորութեան պատրուակաւ՝ անորմէ վրէժ լուծելը մեղի ոչ միայն անհեթեթ այլ և անիրաւ կ'ըլլի: Արովհետեւ սոյն պատասխանատուութիւնը միայն ժամանակին Ընդհ. ժողովին՝ և մանաւանդ ազգին վրայ կ'ծանրանայ՝ որ մարտի դէպքին դէմ իր կամքն 'ի պաշտօնէ Բ. Գրան յայտնելու չելաւ, և մինակ երեսփոխան մը զանուեցաւ, այս է Վ. Փանոսեան է՝ Ֆէնտին՝ որ իրեն յատուկ արիութեամբը՝ բոլոր ուժովը բողոքեց, պաշտօնական գոները քաշքշուեցաւ, հալածուեցաւ և զրեթէ միայնակ մնաց իր պաշտօնակիցներուն մէջ՝ որ այն բռուն եղելութեան առջև ծուր դրին և մինչև անդամ զայն պիտանի համարեցին:

Արդ՝ այժմ պատմութիւնը ետ չդառնար, քանդուած շէնք մը կ'նորոգուի՝ սակայն նախորդ վիճակին չվերածուի: Իսկ եթէ արդի Ընդհ. ժողովին գիմադիր մասը՝ որուն շարժումներն անձնական նկատումներէ զուտ համարել կ'փափաքինք, եթէ սոյն գիմադիր մասը, կ'ըսենք, կ'ուզէ ապագայ հայ բունակաշներու դաս մը տալ և պետական խաղերու առջևն առնուլ, թող իր իրաւանց անվեհեր ու ջերմ ախոյեան կանգնի, թող բողոքէ, ինչպէս որ բողոքեց՝ թէ և քիչ մ'ուշ, անցած բռնական իրողութեանց դէմ, թող կրակ տեղայ անոնց գլխին վրայ՝ որ երբեմն ազգին եկեղեցին, երբեմն Սահմանադրութիւնը, երբեմն արտօնութիւններն ու իրաւունքն իբրեւ իրենց մասնաւոր ապրանքը ծախելու կ'ենեն և պահ մը կ'յաջողին՝ միշտ մեր կուրուքեան շնորհիւ: Այս ամենն ընելով իր իրաւունքը կ'գործադրէ, սակայն ինչ կ'պահանջէ յանձնակմբէն և ոտոր խմբադրած կամ վերաքննած Սահմանադրութենէն՝ զոր նկատողութեան առնուլ որոշելէն ետեւ՝ իր 27 և 67 նստին մէջ, կ'որոշէ նաեւ զայն մերժել իր 217 նստին մէջ: Ըստ մեզ՝ ժողովը նախորդ որոշում մը ուրիշ որոշմամբ մը կրնայ ջրել, բաւական է որ աչքն առնու՝ յեղեղուի, թեթեւաբան, որոշեալ սկզբունքի չհետևող ժողով մը կոչուելու: Եւ սակայն ինչ է յանձնակմբին և նոր ծրագրին յանցանքը: Միթէ յանձնակմբին իր պաշտօնն Ընդհ. ժողովին ընդունած, Սահմանադրութիւնն օտար ձեռքէ կորզած,

և կրկին ազդային օրինաւոր ատենին դարձուցած չէ՞, միթէ, ինչպէս որ Պէկեան էֆ. կ'ուզէ, դործն ըստ կարի օրինաւորութեան շրջանին մէջ մուծած չէ՞, քանի որ անհնար էր՝ մարտի պատահարէն ետեւ՝ Սահմանադրութեան 99 յօդուածին զործադրութիւնը։ Սակայն ենթադրելով որ վերաքննութեան ձևն ապօրէն է, դարձեալ ո՞վ պիտի տայ անոր վերջնական վճիռը, ո՞չ ապաքէն Ընդհ. ժողովն որ իր հեղինակութեան շատ նախանձախնդիր կ'երևի, թէև այս պարագայիս մէջ անձէն կ'դատէ դործը, քան զործին յարակից արժէքը։

Լաւ կամ վատ՝ Սահմանադրութեան նոր ծրագիրն Ընդհ. ժողովին առջեւն էր. ոչ ոք կ'ստիպէր զինքն որ զայն անփոփոխ և միահաղոյն ընդունի, այլ ազատ էր՝ քանի մը տարի քննուած, սերտուած և ներկայ կերպարանն առած օրինադիրքին բոլոր տրամադրութիւնները, նոյն իսկ մանր յօդուածներն ու ոճը զընդունել, այլայլել, կտրել թափել և իր ուզած ձևը տալով անոր՝ վաւերել։ Այս իրաւաստութիւնն ունենալով Ընդհ. ժողովն ինչո՞ւ նոր ծրագրէն իբր ճիւղաղէ մը՝ կ'շրմուռ և անոր էութիւնն ուրանալու կ'եղնէ։ Ըստ մեզ, արիութեան առելի օգտակար դործ մը, մարտի պատահարին դէմ իրական բողոք մ'ըբաժ և իր կարողութեան չափն ազդին ցոյց տուած կ'լինէր եթէ նոր ծրագիրը քննութեան առնլով իրեն անընդունելի երևցած մասերը պատուէր նետել և առելի հիմնաւոր, զործադրելի և հասկանալի բան մ'օրինադրէր։

Բայց Ընդհ. ժողովն սկզբունքի տեղ՝ մարդ և դէպք կ'դատէ, կ'մերժէ ծրագրին վերաքննութիւնը, այս որոշմամբ մեզ շնորհ 1866 մարտի սև օրերուն կ'դարձնէ կ'ձգէ, և անդէտս այնպիսի փափուկ խնդիրներու դուռ մը կ'բանայ, որմէ մեր անփնաս անյնելիքը կ'ստիւծելի է . . . :

Ազդին ներկայ ազէտալի վիճակին մէջ՝ ընտրելի է ո՞ւր ուրեմն մանր մունր ապօրինաւորութեան կէտերու վրայ աչք դրցել, մեր դառնուած միջավայրն աչքէ չհեռացնել, ապագայ սերնդին՝ այս է պատմութեան վճիռը չկանխել և ստէպ օգտակարութեան սկզբունքը վերայեալ սկզբունքի մը չզոհել։ Արդ՝ կը հարցնենք իւրովն թէ 21-է նստին որոշումն ի՞նչ օգտակարութիւն ունի, եթէ ոչ հին կիրքեր յուզել, կենդանի անձնականութիւններ վերաւորել, նոր դաւերու տեղի տալ, խաւարասէր կուսակ-

ցութիւններու նորէն օր ցուցնել, երախտաւոր և ջանասէր սա-
կաւածիւ անձերու սիրտը կտրել, վհատեցնել, նա մանաւանդ՝
խիստ կենսական խնդիրներու որոշումը անհունս երկարաձգելով՝
աղղին բազմադիմի տառապանքն յարատե պահել: Ասան զի՝ եթէ
հինը թէ նորը քննելու խնդիրը միայն ամիսներ կ'սպառէ, բուն
քննութիւնը քանի քանի տարիներ պիտի կուլ տայ արդեօք . . . :

Բայց միւս կողմէն՝ ինչպէս որ Եռսուֆեան էֆ. կարծեմ, ը-
սաւ, Ընդհ. ժողովը յոռի շրջանի մը մէջ ընկած է այժմ: Ե-
թէ կ'կարծէ՝ հին Սահմանադրութեան վրայ վերաքննութիւնն իր
մէջ սկսելով՝ զայն մաս առ մաս սրբադրել, և նորածին օրէ-
նօրէրներու հիմնադրերն և անրջադրերն արձանագրելով՝ անկից
վերաքննեալ Սահմանադրութիւն մ'երեւան հանել՝ մեծապէս կը
սխալի և անել բաւելի մը մէջ կ'մտնէ: Երբէք Ընդհ. ժողով
մը կարող չէ խմբովին օրինադիրք մը յօրինել. կամ այն է որ
գիտողութիւններն ընելէն ետեւ՝ մասնակիքի մը ձեւօք անոնց
մարմին պիտի տայ, կամ նոր մասնակումբ մը պիտի կազմէ հի-
նը վերաքննելու և վերաքննութեան արդիւնքն իրեն ներկայելու:
Առաջին պարադային մէջ՝ թող թէ Սահմանադրութեան հակա-
ռակ է, երկրորդ անգամ վերաքննութեան պիտի նստի, և այս
ալ անհեթեթ և երկարատե դործ. երկրորդ պարադային մէջ՝
մէր պիտի գտնէ Սահմանադրութեան 99 յօդուածին տրամադրած
յանձնաժողովը, որով ըսել է թէ ինքզինքն անդործութեան դա-
տապարտած պիտի լինի:

Միթէ այս էր Ընդհ. ժողովին նպատակը. անշուշտ ոչ. այս-
պիսի կասկած յանցանք մ'է: Արդի Ընդհ. ժողովին պէս լեզ-
ւանի ժողով մը զիտմամբ ինքզինք անշարժութեան չդատապար-
տեր: Մինակ աղղին նաւը Կարիպտէն ազատեմ ըսելով՝ Սիւ-
լաի մէջ ձգած է և անտարակոյս անկից ելնելու հնար մը պի-
տի գտնէ: Հետաքրքիր ենք տեսնելու թէ ինչպէս:



ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍ ՄԻՐԶՍՅ

Անաղորոյն մահն առաւ մեր ձեռքէն այս ընտիր հողին և մեզ 'ի խոր սուգ համակեց : Բժշկաց գիտութիւնը , ընտանեկան անձանձիր խնամք և հող , բարեկամաց աղերսն անզօր զտնուեցան իր անբուժելի հիւանդութեան գէմ : Սարգիս Միրզայի մահուամբն Ազգը կորոյս ազատասէր մէկ անդամը , զերգաստանը՝ զորովալի որդի մը , բարեմնոյն ամուսին մը , հայ դրակնութիւնը՝ հանձարեղ զրիչ մը : Միրզայեան զերգաստանին յատուկ ամէն բարեմանութիւններն ունելով Սարգիս Միրզա , նոր փայլ մ'էս աւելցուց իր անուան և միշտ կենդանի պիտի մնայ Ազգին մէջ : Կենսադրական տեղեկութիւններ ուրիշ անդամի թողլով՝ կ'հրատարակեմք հետեւեալ գիրը .

... Խմբագիր ,

Ապրիլի 27ը Զմիռնիոյ հայ հասարակութեան համար տխուր և սրտաճմլիկ օր մը եղաւ . Ազգը նոյն օրը ցաւալի կորուստ մը ունեցաւ , կորուստ՝ որու վրայ արտասուեց չէ թէ միայն հայը՝ այլ նոյն իսկ օտարը որ մեզ պէս քաջ կը ճանաչէր բարեյիշատակ հանդույսելոյն անդուդական ձիւքերն : Ամենուս սիրելի՝ Սարգիս Միրզա ուսումնական և աշխոյժ երիտասարդն էր այն , զոր անաղորոյն մահը խիստ կանուխ յափշտակեց մեզմէ : Սոյն անձը անձանոթ մէկը չէ նոյն իսկ հեռաւոր մերազնեկց . նա իր զրական հանձարովն և արդիւնաւոր երկերովն քաջածանօթ է ուսումնականաց շատերուն :

Բնութիւնն ամեն ընտիր յատկութիւններով զարդարելով զան՝

Ազգիս ամենակարեւոր մէկ անդամը յօրինած էր, որ մեծ յոյսեր կուտար դեռ ևս ապագային մէջ մեծ գործերով իր անունը փառաւորել: Երիտասարդութեան յիրաւի ճշմարիտ պարծանքն. վասն զի ամեն ազգօրում գործերու մէջ անոնց եռանդն ու աշխոյժը արծարծող ու թելադրիչն էր: Որ և է ազգօրում ճեռնարկութեանց ջերմ փափաք յայտնելով՝ մեծը և փոքրը առհասարակ ՚ի նոյնս կը խրախուսէր. միանգամայն քանջ ատենախօս, որ ամեն պարագայի մէջ ունկնդրաց սիրտն ու զգացումը շարժելով՝ իւր իմաստասիր խօսքերն խորին տպաւորութիւն կ'ընէին ամենուն, և սաստիկ ծափահարութեամբք կը պատկուէին:

Քաղաքիս Վապուրական թատրոնը՝ ուր երբեմն ազգային ընտիր տեսարաններ կը ներկայանային, հանդուցելոյն անխնայ ջանից զովանի արդիւնքն էին: Կենդանի է նա՝ ժամանակաւ քաղաքիս մէջ հրատարակուած Մէն-Բէն հանդիսին մէջ, ուր պարունակուած ընտիր յօդուածներու մեծադոյն մասը անոր դրչին արդասիքն են: Կենդանի է իւր յօրինած քանի մը պատուական ողբերգութեանց մէջ, ՚ի Մէն-Նէր-Է, ՚ի Մէն-Էր-Է, ՚ի Վէր-Էր-Է, որք ընդհանրապէս մեծ ընդունելութիւն ու յարգ դտած են Ազգէն: Կենդանի է դեռ իր քանի մը տարի յառաջ խմբագրած Իր-Էր-Է պատուական լրագրին մէջ: Կենդանի է իւր ուրիշ բազմաթիւ գրական երկերն ու թարգմանութեանց մէջ, յորս իւր կիրթ ճաշակն ու վաւելուն երեւակցութիւնը կ'փայլեն:

Աերջապէս կենդանի է նա բոլոր ազգայնոց սրտերուն, մըտքերուն և ատենաներուն մէջ: Մանաւանդ կենդանի է անմահ է նա Միրզաբեանց դերդաստանին մէջ, ինչպէս յաւիտեան կենդանի են անոր մէջ իւր մեծ քերթող հաւն՝ Տէր Օհան Միրզա Վանանդեցի, և հանդուցելոյն հայրը՝ Տէր Մարգար՝ Աւագապտիւ քահանայք. անդին յիշատակք Զմիւռնիոյ հայ ժողովրդեան և մշտնջենաւ որ պարծանք եկեղեցական սրբազան դասուն:

Ո՛հ, մեծ է այսպիսի ընտիր երիտասարդի մը կորուստը Ազգիս համար, որու վրայ իրաւամբ կ'ողջայ այսօր Զմիւռնին:

Գնա՛ ուրեմն ո՛վ անդին յիշատակ. գնա՛ Երկինք քու յաւիտենական դեղեցիկ հայրենիքդ, որով միայն քու սիրտդ պակաս էր, հոն պիտի լիանայ ու զօրանայ ան. այն է վսեմ ողինք, որ արժանաւոր վարձքն ու բնակարանն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ֆրանսաի աղղային ժողովն՝ իր առջև տարտամ, վեհերոտ դրութեան, արքայասէր միտումներուն հետեանքը կ'կրէ : Դիւցազնի մը, Կարիպալտի լեզուն պրկեց, Բարիզի աղատասէր երեսփոխանները թշնամանեց, Օրէանները գլուեց, Վէրսայլ մայր քաղաք ըրաւ, և արծարծեց ասով այն կայծն որ արդէն ժողովրդեան ստորին կարգերու մէջ ծածկուեր էր, և թերեւ անգէտս ընկերային այս սոսկալի կռիւր գրդուեց : Հիւկօ ըսաւ, Բարիզ Ֆրանսաի գլուխն է, սիրտն է, և ահա այս գլուխն որ թէև մոլորեալ սկզբունքի մը համար կ'ընդվիզի, այն սիրտը թէև ապականակիր՝ տակաւին վեհ զգացումներով կ'համակի, կտրելու և ճղմելու փորձեր կ'ընին, իսկ մարմինը՝ Ֆրանսա՝ անտարբեր կ'մնայ, Ֆրանսա որ այս վերջին պատերազմին Բարիզի շնորհիւն իր պատինն աղատեց :

Մարտի 18ի յեղաշրջումէ ետքը՝ թաղապետական իշխանութիւնն (commune) աւելի կ'ամրանայ. Մարսիլիա (Ապրիլ 3) և Լիոն վայրկեան մը կ'խլտին մեծ քաղքին հետեւելու և կարմիր դրոշակը կ'պարզեն, տակայն շուտով կ'ճնշուին և քաղաքային պատերազմը միայն Բարիզի բոլորտիքը կ'մղուի : Ֆրանսաի աղղային ժողովը՝ վերահաս սպառնալից յեղափոխութենէ ամէն նախապաշարում թոթուելով՝ կ'սթափի և յանկարծ Հասարակապետութեան սլաշտպան կ'դառնայ : Նախ հաշտարար միջոցներ կ'գործածէ և ապա յեղափոխական Բարիզը գինու զօրութեամբ զսպելու կ'ենդէ : Հետզհետէ քաղքին շրջակայ ամբողջներէն ապստամբները կ'վանէ. Շաթիլյօն, Մէօտօն, Սէվր Վէրսայլի զօրաց ձեռքը կ'ընան, Ֆլուրանս՝ ապստամբութեան մէկ պարագլուխն՝ ու Տիւվալ զօրապետը կ'սպաննուին, Վանվր և Իսսի բերդերը կ'զիմանան : Թաղապետական իշխանութիւնն որ մարդու, ստակի և մթերքի կարօտ է, կապուտ ու կողոպուտ ի գործ կ'դնէ, բուռն հրամաններ կ'արձկէ անձի և ստացուածքի դէմ : Նորատի և Հափահաս քաղաքացիները զինուորագրութեան կ'կոչուին, Շանզի զօրապետը, որ ապա կ'արձակուի, Տարսոյ արքեպիսկոպոսը, որ Պիամարգի միջնորդութեամբը կ'աղատի, կը

բռնութիւն բանաւ կ'դրուին, Վէրսայլի կառավարութեան քանի մը պաշտօնէից դէմ զլխատման վճիռ և անոնց կալուածքը թալլելու և զբաւելու հրամաններ կ'եննեն, բոլոր չափասէր լրացիրները կ'խափանուին, շատ մը ճիգովիներ հրացանի բերանը կ'երթան, մասնաւոր տուներ, եկեղեցիներ, ինչպէս Մատլէն, Նօդը-Տամ առ ու աւարի կ'մատնուին. Պանքայէն ու ուրիշ ընկերութիւններէ մեծ գումարներ կ'կորզուին: Բարիզի տիրապետները, Բէյադ, Տէլէքլիւզ, Քլիւզէ, Պլանքի՝ որ ետքէն դերը կ'ընկնի, Բանկ՝ ամէն ինչ ըստ հաճոյս կ'տնօրինեն և ընկերային նոր օրէնքներ կ'հաստատեն: Սակայն կառավարութեան զօրքերն երթալով կ'զօրանան և կ'յաղթեն, վճատութիւնը կը պաշարէ թաղապետները, իրենց Տոպրովսքի զօրապետը դէպ 'ի Բարիզ դառնալու կ'ստիպուի, զժողովիւն իրենց մէջ ծաղկելով ոմանք կ'հրաժարին, այլք խոյս կ'տան, և նոր 'ի նորոյ ընտրութիւններու կ'ձեռնարկեն, մինչդեռ կառավարութեան զօրքերը Բարիզի դռները կ'հասնին: Հասարակագիտական ժողովեան կողմէն քանի մը պատգամաւորներ Վէրսայլ կ'ըլման հաշտութեան պայմաններ* առաջարկելու: Թիէր կ'խոստանայ Ֆրանսայի միւս քաղաքներու արուելիք ազատութիւնները Բարիզի ալ տալ, սակայն կ'մերժէ անոր խնդրած անկախ դիրքը ճանչել և հայրենիքը պառակտել: Այս բանակցութեան արդիւնքը թաղապետական իշխանութեան անընդունելի դալով՝ կուր կ'նորոգուի, ասիրիւն 16ին Բարիզի ռմբակոծութիւնը կ'սկսի իր բոլոր ահաւել աւերումներովը և կառավարութեան զօրքերն ընդհանուր յարձակում մ'ընելու պատրաստուելով՝ քաղաքը կ'պաշարեն:

Իսկ ԳԵՐՄԱՆԻԱ՝ որչափ որ ուշադիր կ'դիտէ Բարիզի աղետալին անցքերն՝ և արդէն 500 միլիոն ֆրանքի առաջին վճարքն առած է, իր ներքին քաղաքական կազմակերպութեան հաստատութիւն մը տալու կ'աշխատի, և արդէն իր Բարլմէնտի ձեռք կայսրութեան նոր Սահմանադրութիւնը կ'հաստատէ, թէև ժողովին կղերական մասն անոր դէմ կ'իենայ և՛ ըստ սովորութեան՝ յատուկ առանձնաշնորհութիւններ կ'պահանջէ պարապ տեղը: Նոյնպէս պարսկական երեսփոխանները Պապին աշխարհա-

* Բարիզ կ'պահանջէ Հասարակագիտութեան պահպանութիւնը, քաղաքապետական կատարեալ ազատութիւն, այնպիսի ազգային պահապան զօրքեր որոց ձեռք ապագայ պետական պատահարներու առաջն առնուին, և ընդհանուր անընդունելի յեղափոխականներուն:

կան իշխանութեան համար պետութեան միջնորդութիւնը կ'ստանա՝ Ստեփաննի, ոչ միայն այս, այլ նոյն իսկ անսխալականութեան դաւանութիւնը նոր հարուած մ'էս կ'ընդունի, Մուսիքի համալսարանին աստուածաբանութեան դասախոս՝ Երեմի Տօլլին՝ ճէրի կողմէն, և Գերմանիոյ մէջ կրօնական մեծ յեղափոխութեան նշանները կ'երևին։ Տօլլին՝ յատուկ դրով մը կ'պնդէ թէ անսխալականութիւնն ոչ միայն ընկերային, քաղաքական, այլ և երկնային օրինաց հակառակ ազդակործան դրութիւն մ'է։ Պալիէրայի կառավարութիւնն Վատիկանու այս որոշումն իր երկիրներուն մէջ հրատարակելու կ'արդիւնէ։

ԱՆԿԼԻՑ Բարլամնդի մէջ Ալատստրնի պաշտօնէութիւնը պահ մը կ'երեւայ, Սե ծովի խնդրոյն առթիւ մեղմաբար վարուելուն։ Յառաջիկայ տարուան ելումսից հաշուեկշիւն Յ միլիոն լիբրի պակասը լեցնելու համար՝ Լըվ՝ Գանձուց պաշտօնէին առաջարկած մէկ այլանկալ և անիրաւ միջոցը՝ այս է վառիկներու (allumettes) վրայ տուրք դնել, Լոնտօնի մէջ մեծ աղմուկ և շփոթ յարուցանելուն՝ կ'որոշուի եկամտի տրոց վրայ 2 քէնս վերադիր ընել։ Ալատստրնի կնիքով խնդիրն՝ որ բաւական ժամանակէ վեր՝ Ամերիկայի և Անկիոյ մէջ պատերազմի որոմ մ'էր, երկու տէրութեանց կողմէն կազմուած խառն յանձնաժողովի մը միջոցաւ իր լուծումը գտնելով՝ տեղեկադիրն երկու ժողովարաններու հաւանութեան ենթարկուելու վրայ է։

ՌՈՒՍԻԱ՝ իր զինուորական պատրաստութեանց վերջ կ'տայ, պետութեան մէկ քանի կողմերը զեռ ևս դանուած ստրուկներուն ազատութիւն կ'շնորհէ, և օր ըստ օրէ Թուրքիոյ հետ բարեկամական յարաբերութիւնները կ'աւելցնէ, այնպէս որ առանց կասկած ազդելու իր Սե ծովու նաւատորմի ու Սէպասթոփօլի վերականգման կրնայ մտածել, ինչպէս Թուրքիա Պոսֆօրի բերանն ու Տարտանէլի նեղուցն ունեցած ամրոցներու վերանորոգման։ ՌՈՒՍԻԱ՝ որ դերմանալոց ըրած թշնամանաց պատճառաւ պաշտօնէից փոփոխութիւն կրեց՝ և իր ազդային ժողովին ընտրութիւնն ալ քիչ ատենէն պիտի աւարաէ՝ յուսալի է որ իր ներքին բարեկարգութեան զբաղի քան թէ խռովութիւններ յարուցանելու և Օսմանեան պետութեան միջամտութիւնը հրաւիրելու։ Իսկ ՀՈՒՍԻ Ս. Պապն՝ Ֆրանսուէն անյոյս՝ տարակրօն տէրութիւններու պաշտպանութեան կ'իյնէ որ իր աշխարհական

խշխանութիւնը վերականգնէ. Անդօնէլի զէպ 'ի Հիւսիս, և Քրանքի Կ. Պօլիս կ'ուղևորի: Այլսուի թէ Քրանքի՝ ոչ միայն պաշտօն ունի Հասունեան խնդիրը լուծելու, այլ և աղաչելու Բ. Ալի փաշան որ Ս. Պապին Գեր, Հասունի տուած կոնդակը (reverser) չմերժէ, ինչպէս որ իրօք մերժեր էր կանխաւ, մանաւանդ այն տրամագրութիւնն որով Ս. Պապը բոլոր հռոմէական հայերու եկեղեցական կալուածոց անկախ տէր կ'հանդիսանայ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Անկլիոյ գեսպանին թելադրութեամբը՝ Օսմանեան տէրութիւնը ծախ-լնալու մը հաստատեց՝ ի Թօփհանէ, որպէս զի կէս օրին ճիշտ արձակուելով՝ զիւրութիւն լինի ամենուն ժամացոյցներն ըստ այնմ լարելու և շտկելու: Այս թնդանօթը ելեկտրական թելով մը Բէրաի Մետէօրական Գիտարանին հետ միացած և Վօլթայեան զործի մ'ասոր կապուած է: Երբ Գիտարանի ժամացոյցը կէս օրին կ'զարնէ, ելեկտրական կայծը թնդանօթին կրակ կ'ազդէ կէս մղոն հեռուէն՝ և իսկոյն թնդիւնը ճիշտ ժամը կ'իմացնէ:

Փափաքելի էր որ այս ժամացուցական ճշգրտութիւնը պաշտօնական ամէն գործերու մէջ տեսնուէր:

— Օսմանեան պետութեան բոլոր պարտուց ցուցակը լրագրէ մը քաղելով այս տեղ կ'նշանակենք եղած փոխառութեանց թուականովը:

	Նախկին գումար	1871էն դեռ պարտք
1854..... Լիբ. Ստր.	3,000,000....	Լիբ. Ս. 2,301,750
1855..... »	5,000,000....	» 4,248,800
1858..... »	5,000,000....	» 4,251,500
1860..... »	2,037,200....	» 1,829,800
1862..... »	8,000,000....	» 6,512,200
1863-4.... »	8,000,000....	» 6,655,500
Ընդհ. պարտք.	» 36,363,630....	» 35,636,360
Գանձառումն ..	» 7,036,830....	» 4,222,100
1869..... »	22,222,220....	» 22,000,000
»	96,659,880	» 87,658,010

— Աշխարհիս բնակիչներու կէսը 19 տարեկան չեղած կ'մեռնին, և 10,000 մարդէն միայն մէկ հոգի 100 տարեկ'ապրի:

Եւ իրօք ծնած 1000 երախաներէն մէկ տարեկէն միայն 870 կ'մնան: Երեք տարեկէն 600, հինգ տարեկէն 584, տաս տարեկէն 540, երեսուն տարեկէն 446, վաթսուն տարեկէն 226, իննսուներեք տարեկէն 9, հարիւր տարեկէն 1 հոգի միայն:

Տարին 37,037,037 հոգի կ'ծնին, օրը 101,471 կ'ծնին, ժամը՝ 4228 և մէկ րոպէի մէջ՝ 70 հոգի. ասոր փոխարէն տարին 33,333,334 հոգի կ'մեռնին. օրը 91,324, և ժամը 3803:

Վերջապէս մէկ վայրկեանի մէջ 65 հոգի կ'մեռնին, այսինքն ամէն մէկ ակնթարթի մէջ մէկ հոգի:

— Լրագիր մը կ'դրէ. Ակն յայտնի կ'երևի մեզ որ քիչ ատենէն Անկլիոյ և Պերմանիոյ մէջ ծովային զերիշխանութեան խնդիրն ալ պիտի երևան գայ: Պիսմարք՝ իր սովորութեան համեմատ՝ պիտի սկսի այս մասին անտարբերութիւն ցոյց տալ և որ և է կերպով իր խորհուրդները պիտի քողարկէ: Սակայն երբ դործելու ժամը հասնի, դիմակը վար պիտի առնու և բոլոր Եւրոպայի զարմանք պիտի պատճառէ ահապարհաւային զօրութիւն մը ցոյց տալով:

— Չինեւ յայտնի. Շատ մարդիկ կարծեն թէ ձկները ձայն չունին. բայց մերօրեայ ձկնորսներ կ'պնդեն թէ Բաւլ ըստած ձուկը զորաի պէս կ'կանչէ, տառելիը մկան պէս կ'ճչէ, կարմրագլուխը խողի պէս կ'խանչէ, կամ կկուրն պէս կ'ձայնէ: Այսինքն՝ որ ծովային մեծ ձուկ մ'է՝ երբ ժայռուտ տեղեր լողայ՝ այնպիսի սուր ձայն մը կ'հանէ որ քսան գրկաչափ խորութենէ կրնայ լսուիլ:

— Խոստովանահայր մ'իւր ծուխին խոստովանութիւնն առիթ բռնելով՝ կ'յորդորէր զանի որ զինի խմելէն դադրի, վասն զի զինին վատ դործեր ընել կ'տայ, և դժուր կ'տանի, կ'ըսէր: Ծուխը պատասխան տուաւ հետեւեալ տրամաբանական ձևով:

— Շատ կ'սխալեք, տէր հայր. բժշկութիւնը կ'հաստատէ թէ լաւ գինին, լաւ արիւն կ'շինէ, լաւ արիւնը զուարթութիւն կը պատճառէ, զուարթութիւնը լաւ խորհուրդներ կ'ազդէ մարդուս, լաւ խորհուրդները լաւ գործերու կ'տանին մեզ, լաւ գործերն ալ շիտակ արքայութիւն կ'առաջնորդեն, ուրեմն լաւ գինին մարդս արքայութիւն կ'տանի: — Օրհնեալ լինիս, տղաս, ըսաւ

տէր հայրը՝ որ այս նորաձև տրամաբանական առարկութեան գէմ բառ մը չզտաւ ըսելու :

— Ամէն մարդ գիտէ որ այս տարուան բարեկենդանին ամենէն շքեղ պարահանդէսը Պ. Պ. . . . գեսպանին տուածն էր . մանաւանդ հիանալի գեղեցկութեամբ կ'իյայլէին հանդիսական տիկիներն՝ որոցմէ ոմանք շարքը չէին խնայած : Դադարի միջոց մ'երբ անիկաները հանդիսա կ'ընէին , Պ. . . . գեսպանը Ք. . . . բաշային հետ թև 'ի թև ճեմելու ատեն հարցուց անոր՝ շարքեալ դասէն կազմուած տիկիներու խումբ մը ցոյց տալով . — Ասոնց գեղեցկութեան վըայ ինչ է ձեր կարծիքը : — Ո՛հ , ըսաւ բաշան , քաջ գիտէք որ ներկարարութենէ չեմ հասկընար :

— Մօզար և Հայտն հայկերոյթի մը հրաւիրուած էին . առաջինն որ շաւքայն գինին շատ կ'սիրէր Հայտնի ըսաւ .

— Քեզի հետ վեց շիշ շաւքայն գրաւ կ'ընեմ որ հիմակ իսկ շարադրելք մէկ եղանակս առաջին անգամ չպիտի կարենաս դաշնակին վըայ ածել :

— Դրադ կ'ընդունիմ , պատասխանեց Հայտն :

Մօզար սեղանի մ'առջև նստաւ , քանի մը ձայնաղբեր (նօղա) դժեց և Հայտնի ներկայացուց :

— Ա'երեւի թէ , ըսաւ Հայտն , շուտիկն հանած ստակներ ունիս որ գրպանդ կ'ծակեն . վճարէ ուրեմն շաւքայնները . այս ըսելով դաշնամուրին առջև նստաւ և սկսաւ նուագել :

Եւ յանկարծ կանկ առաւ :

— Ի՞նչպէս կարելի է նուագել այս եղանակս . երկու ձեռքս դաշնակին երկու ծայրերը գտնուած ատեն՝ ճիշտ միջ տեղը զարնելու ձայնաղիւր մը կայ :

— Ի՛հ , չե՞ն կարող , ըսաւ Մօզար , կեցիւր նայէ — և դաշնակին առջև նստաւ :

Ներածումը նուագեց , և երբ այն նշանաւոր միջ տեղի ձայնաղբին հասաւ , ոսկորը քթովը կոխեց , բոլոր կոշնականները սկսան խնդալ :

Հայտնի քիթը տափակ էր , իսկ Մօզարինը սրածայր և երկար : Հետևապէս Հայտն իր քիթն սղոտիկութիւնը տուժեց վեց շիշ շաւքայն վճարելով :

(Ի Վ Ա Ն Օ Է)

ԳԼՈՒԽ Ե.

Միթէ հրէայ մի աչք չունի. միթէ ձեռք, գործարաններ, զգայարանք, յօժարութիւն և կերք չունի. միթէ մի և նոյն սքանչելի շնորհքով չմանկեր, մի և նոյն զէնքով չվիրաւորիր, մի և նոյն հիւանդութիւններու ենթակայ չէ, մի և նոյն միջոցներով չհարմանուիր. միթէ մի և նոյն ձմեռէն և ամառէն չմնիր և չտարնար ճիշտ մի քրիստոնէի պէս:

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԳԱՆԸ

ՕՍՎԱԼՏ Էա դառնալով իր տիրոջն ակաւջին փսփտայ. — Նորեկ հիւրը հրէայ մ'է, որ ինքզինքն եօրք քաղքի բնիկ Իսահակ կ'իյնէ. միթէ կ'վայլէ որ զանի սրահը հրամցնեմ:

— Թող այդ պաշտօնը կիւրթ կատարէ, Օսվալտ — ըստ Վամպա իր սովորական լրբութեամբը — հրէին յարմար կարապետ մը՝ խողպանը կրնայ լինիլ:

— Սուրբ կոյս — ըստ վանահայրի խաչ հանելով — քնչանհաւատ հրէայ մը մեր առջև պիտի ներկայանայ:

— Հուն հրէայ մը — ձայնեց տաճարականը — ինչպէն Սուրբ դերեզմանին պաշտպանի մը պիտի մօտենայ:

— Իրաւի — ըստ Վամպա — կ'երևի թէ տաճարականներն աւելի կ'սիրեն հրէից ժառանգութիւնը քան ընկերութիւնը:

— Մի այլայլեք, իմ արժանի հիւրերս — ըստ Սէտրիկ — չեմ կարող իմ հիւրասիրութեանս չափ դնել ձեր անտրութեան պատճառաւ: Եթէ Ստոուաժ այն կամակոր և լմբահաւատ ազգին շատ տաքիններ հաշտ աչօք նայեցաւ, մենք ինչո՞ւ համար հրէի մը ներկայութեան մի քանի ժամ չհանդուրժենք: Բայց չեմ ստիպեր մէկն որ անոր հետ խօսի կամ կերակուր ուտէ. թող անոր սեղանը դատ տեղ մը դնեն, միայն թէ — յարեց նա ժպտելով — եթէ կամին չեմ արգիլէր որ այս ասպարօշ հաղնոզ օտարականներն անոր հետ ընկերակցին:

— Պարոն Սէտրիկ — պատասխան տուաւ տաճարականը — իմ սարակինացի դերիներս ճշմարիտ մահմետական են, և քրիստոնէի չափ կ'խորշին հրէի հետ տեսակցութիւն ընելու:

— Ճշմարիտը կ'ըսեմ — յարեց Վամպա — որ չեմ հասկնար

Թէ ինչպէս Մէհմէտի ու Տէրմահմեդի պաշտօնարկուններն երբեմն յԱստուծոյ ընտրեալ ժողովուրդէ մը գերազանց լինին :

— Հրէան քու քովդ պիտի նստի , Վամպա — ըսաւ Սէտրիկ — յիմարն ու խաբեբան իբար պիտի դանեն այս կերպով :

— Յիմարը — պատասխան տուաւ Վամպա՝ ճարպի մը կտոր ցոյց տալով — խաբեբային դէմ պատուար մը կանգնելու միջոցը պիտի գտնէ :

— Լուսթիւն — ըսաւ Սէտրիկ — վասն զի ահա ներս կ'մտնէ նոր հիւրը :

Բարձրահասակ ծեր ու նիհար մարդ մ'որ իր բնական երկայնութիւնը կորուսեր էր ստէպ ծռելէն , ներս մտաւ , պաղ ընդունելութիւն մը դառաւ , շատ մը բարեններ ուղղեց , ահով և վարամամբ յառաջ անցաւ և դնաց ստորին սեղանին մէջ ծայրը նստաւ : Իր դէմքին կանոնաւոր և բարակ գծերը , արծուի քիթը , իր սուր սև աչիւրը , իր լայն ու խորշմած ճակատը , ալեգարդ երկար մազերն ու մօրուսը թերևս աղւոր երեւէին , եթէ այնպիսի ցեղի մը յատուկ նշանները չլինէին , որ՝ այն խաւարին դարերուն մէջ , միօրինակ ատելի էր դիւրահաւան ռամկին , և ընչասէր ազնուականներու կողմէ կ'հալածուէր , և կարելի է նոյն իսկ այս ատելութեան և հալածանքին պատճառաւ ազգային յատուկ դրոշմ մ'առեր էր , որով աւելի ծանր խօսք մը չըսենք , իսկաւ անարդ և նողկալի կ'երեւէր :

Հրէին հազուադէպ որ ըստ երևոյթին՝ փոթորկէն շատ աղտոտներ էր , բազմաձալ պարզ վերարկու մ'էր որ մթաղոյն ծիրանի բաձկոնակ մը կ'ծածկէր : Մուշտակասրատ լայն կոշիկներ հասնէր և մէջքէն դօտի մը կծակէր էր , որուն վրայ փոքրիկ դանակ մ'ու գրելու գործիներ կային՝ առանց գէնքի : Երկար , քրուակ մ'ու գրելու գործիներ կային՝ առանց գէնքի : Երկար , քրուակ մ'ու գրելու գործիներ կային՝ առանց գէնքի : Երկար , քրուակ մ'ու գրելու գործիներ կային՝ առանց գէնքի : Երկար , քրուակ մ'ու գրելու գործիներ կային՝ առանց գէնքի :

Իսրայէլի ամենէն անհաշտ թշնամին զոհ պիտի լինէր անշուշտ տեսնելով Թէ ինչ ընդունելութիւն կ'առնայ նորեկ հրեայ հիւրը Սէտրիկի սրահը մտնելուն : Դայն իսկ տանտէրը պաղ կերպով մը գլուխն օրեց 'ի պատասխան հրէին կրկնակի ողջոյններուն և նշան ըրաւ որ սեղանին ստորին ծայրը նստի ,

Թէեւ ոչ որ կ'շարժէր անոր տեղ բանալու . ընդ հակառակն՝ կողնականներուն կարգէն անցնելու ատեն՝ վարի կողմը նստողներուն աղերսալի և վեհերոտ նայուած մը կ'նետէր, սակայն տաքսօն սպասաւորներն իրենց ուսերը կ'լայնէին և առանց նորեկ հիւրին հող տանելու իրենց ճաշն անընդհատ կ'լափէին : Վանահօր սպասաւորները խաչ կ'հանէին՝ բարեպաշտական կերպարան մ'առնելով, և նոյն իսկ սարակինացի ծառաները՝ Խահակը մօտենալուն՝ իրենց դաշայնը քաշեցին՝ իբր Թէ ծայրացեղ միջոցներով անոր հաղորդակցութեան աղտէն ազատելու պատրաստ էին :

Հաւանական էր որ Սէտրիկ ինչ հիւրասէր ոգւով որ իր տունն այն ընկեցիկ ժողովրդեան մէկ զաւկին բացեր էր, նոյն ոգւով պիտի պատուիրէր իր սպասաւորներուն զանի աւելի մարդավարութեամբ ընդունելու, եթէ՝ նոյն պահուն՝ վանահայրը նշանաւոր խօսակցութիւն մը սկսած չլինէր անոր որսական շուներուն բնութեան և հագաւորութեան վրայ . խօսակցութիւն մ'որ բնուէր ուղեր ընդհատել աւելի ծանր խնդիրներու համար անդամ, թող Թէ հրէին անօթի անկողին երթալը :

Մինչդեռ այսպէս Խահակ նոյն ընկերութեան մէջ իբր տարադիր կ'մնար, ինչպէս որ է իր ժողովուրդը միւս ազգերու մէջ, ի զուր բարեւ մը կամ հանգստեան տեղ մը փնտռելով, կրակարանին մօտ նստող ուխտաւորը ղթաց անոր վրայ, և իր տեղն անոր տուաւ համառօտ ըսելով. — Ծեր մարդ, իմ լաթերս չորցան, փորս կշտացաւ, իսկ քու վրադ թաց է և անշուշտ անօթի ես » : Այս ըսելով կրակարանին ցիր ու ցան խարոյկները ժողվեց և կրակն արծարծեց . վերջը մեծ սեղանէն քիչ մը թան և խաշած այծ առաւ, և դնելով այն սեղանին վրայ ուր ինքն ևս ընթեր էր՝ սրահին միւս կողմն անցաւ առանց հրէին շնորհակալութեան սղոթելու, թերեւ սա պատճառաւ որ չէր ուղեր իր բարեսրտութեան աւարկայ եղող անձին հետ աւելի խօսակցիլ, կամ Թէ վերի սեղանին մօտենալու փափաք ունէր :

Եթէ այն ժամանակները քաջ պատկերհաններ գտնուէին, անսարակոյս ձմեռուան կենդանի պատկերը պիտի ընծայէր այն հրէայն որ կորակոր մարմնովը՝ ցրտահար ու երերուն ձեռքերն երկնցած՝ կրակին վրայ կը ծռէր : Քիչ մը տաքնալէն ետեւ հը-

բէայն իր առջև կեցած շողեւի ճաշին դարձաւ անկշտօրէն և այնպէս արտորնօք և հաճութեամբ կերաւ որմէ կ'իմացուէր թէ երկար ատեն կերակուրէ զուրկ մնացեր էր :

Նոյն միջոցին վանահայրն ու Սէտրիկ իրենց խօսակցութիւնը կ'շարունակէին որսի վրայ . Բովէնան իր սպասուհիներէն մէկուն հետ խօսքի բռնուեր էր , իսկ վէն տաճարականը՝ որ իր աչքը հրէին վրայէն դէպ 'ի սաքսօն օրիորդին կ'ածէր անդադար , կարծես թէ զլխին մէջ խիստ կարեւոր խորհուրդներ կ'զարմնէր :

— Կ'զարմանամ ; արդոյ Սէտրիկ — ըսաւ վանահայրը խօսքը շարունակելով — որ՝ թէ և սաստիկ կ'սիրես քու առնական լեզուդ , չես գործածեր դէթ որսի և անտառային բաւերու համար ֆրանքօ-նօրման բարբառը : Իրաւի չկայ լեզու մ'որ զաշտային հրահանդի մասին այնչափ ճոխ բացատրութիւններ ունենայ , կամ անդէորդին այնքան միջոցներ բնծայէ իր զուարթ արհեստը բացատրելու համար :

— Բարի հայր Էյմէր — ըսաւ սաքսօնը — քաջ դիտցիր որ անդր-ծովեան նրբութիւններն աչքիս ստակ մը չեն արժեր , և առանց անոնց կրնամ իմ գործս տեսնել անտառներուն մէջ : Կարող եմ իմ փողս հնչել , թէ և ոչ *recheate* և կամ ոչ *morte* կ'անուանեմ գոչիւնը : Կարող եմ շուներս սրսի գրգռել , կարող եմ կենդանին քերծել և չորս կտոր բնել առանց գործածելու սապիսի գոհհիկ բաւեր , *curee*, *arbor*, *nombles* ; և բոլոր զրաբան Թրիստեմին բարբանջը :

— Գաղղիարէն լեզուն — ըսաւ փառաբանականը՝ ձայնը բարձրացնելով և այնպիսի խրոխտ ու իշխանական կերպով մ'որ ամէն առթիւ կ'գործածէր — ոչ միայն որսորդութեան բնական լեզուն է , այլ նաև սիրոյ և պատերազմի . լեզու մ'որով կիները կը հրապուրենք և թշնամիներ կ'նստանք :

— Ասպիտղ տաճարական , ձեռքդ բաժակ մ'առ լեցուր — ըսաւ Սէտրիկ — և վանահայր ալ տուր , մինչդեռ ես պատմութիւն մ'ըսելու համար կենացս վերջին երթուն տարուան միջոցն աչքէ պիտի անցնեմ : Այն ատեն սաքսօն Սէտրիկն ինչ որ էր , իր պարզ անկլիական պատմութիւնը գաղղիական վիպասաններու փայլէն պէտք չունէր կանանց հաճելի դառնալու համար , և նօրթալէրանի պատերազմի դաշտը՝ նուիրական դրոշակը պար-

զուած օրը, կրնայ վկայել թէ՛ մաքսօնեան դռնի աղաղակը չը լսուեցաւ սկովտիական բանակին մէջ՝ ամենէն յանդուգն նօրման սեպուհի մ'աղաղակին չափ։ Հիւրերս, այն կուռն մէջ պատերազմող քաջերուն յիշատակին կ'առաջարկեմ այն բաժակս։ Այս ըսելով բաժակը պարպեց և իր խօսքը շարունակեց աւելի ջերմագին։ — Այո, այն օրը քանի քանի ասպարներ բեկան, երբ հարիւրի չափ դրոշակներ քաջերուն դլին վրայ ընկան, երբ ջրի պէս արիւն վազեցաւ, և մահ նախադաս համարեցաւ քան փախուստը։ Սաքսօն վիպասան մը՝ սուրբու խնջոյք մը, որսին բոլորաթիւր արծիւներու գումարում պիտի անուանէր այս պայքարը, վահաններու և սաղաւարտներու թնդիւնը, պատերազմի գոռ ու բոմբիւնը՝ հարսանեաց ցնծութեան ձայներէն աւելի զուարթուն։ Սակայն մեր վիպասանները մեռան — ըսաւ նա — մեր զործերն ուրիշ ցեղի մը զործերուն մէջ կորսուեր են, մեր լեզուն՝ նոյն իսկ մեր անունն օր քան զօր աներեղոյթ լինելու վրայ է, և մինակ ինձի պէս մենաւոր ծերունի մ'այս ազէտքը տեսնելով խոր սուգի մէջ կ'համակուի։ Մատուակ նշնգամ, լեցուր բաժակները։ Տաճարական, այս բաժակը պիտի ըմպենք քաջազէն մարտիկներու համար, թող ինչ ցեղէ կ'ուզեն լինին, այն կտրիճներուն համար որ Պաղեստինի մէջ խաչին ախոյեան կ'կանգնին անվեհեր։

— Այն նշանը կրողին չընկնիր պատասխանելը — ըսաւ Պրայնտը Պուա — Սիլպէր — սակայն խաչին ախոյեաններու մէջ ըյք աւելի արժանի են այդ սրտուին եթէ ոչ անոնք որ Սուրբ գերեզմանին երկուեալ ախոյեաններն են։

— Հիւրասէր անպետներուն արժանի է — ըսաւ վանահայրը — անոնց կարգին մէջ եղբայր մ'ունիմ։

— Անոնց համբար չեմ անարգեր — ըսաւ տաճարականը — սակայն . . .

— Սէտրիկ բարեկամ, ինձ կ'երևի որ — ըսաւ Վամպա կրօնաւոր զինուորին խօսքը կտրելով — եթէ Առիւծասիրտ Քիչարտ բաւական իմաստուն լինէր խենդի մը խորհրդին հետեւելու, իր զուարթ անկլիաջուոց հետ տեղը կ'նստէր՝ երուսաղ մի աղատումը թողլով այն ասպետներուն որ այս զործին մէջ շահ ունէին։

— Եւ միթէ անկլիական բանակին մէջ չկար անձ մ'որուն ա-

նունը տաճարական և Ս. Յովհաննու ասպետներուն հետ յիշուելու արժանի լինի ... — ըսաւ օրիորդ Բօլէնա :

— Ներէ ինձ , օրիորդ — պատասխան տուաւ Պուա — Սիլպէր — իրաւ է որ Անկլիոյ թագաւորն իր հետը քաջասիրտ մարտիկներու բանակ մը բերեր էր 'ի Պաղեստին , որ արիութեան կողմէն նոյն օրհնեալ երկրին անասան պատուարն եղող քաջերուն երկրորդ կարգը կ'բռնէին :

— Ո՛չ , ամենէն ԳԵՐԱԶԱՆՑՆ էին — զոչեյ ուխտաւորը , որ բաւական մօտ եկեր էր անոնց խօսքը լսելու համար , և այս խօսակցութիւնն ականերեւ անհամբերութեամբ մտիկ ըրեր էր :

Ամենուն աչքը այս անակնկալ վկայութիւնը տուող անձին կողմը դարձան : « Այո՛ , նորէն կ'ըսեմ — կրկնեց ուխտաւորը հաստատ և ուժղին ձայնով մը — թէ անկլիացի ասպետները ԳԵՐԱԶԱՆՑ էին այն ամէն մարտիկներէն որ Ս. Տեղեաց պաշտպանութեան համար զէնք առին : Ա՛րսեմ՝ նաև , քանի՛ որ աչօքս տեսայ , որ նոյն իսկ Բիշարտ թագաւորը՝ ու իր ասպետներէն հինգ հոգի՝ Ա. քիաի բերդն առնլէն ետե՛ւ՝ նիզակախաղ դուպար մ'ըրին և որ և է քաջի հետ մենամարտելու հրաւեր տուին : Ա՛յնպէս թէ՛ նայն օրը , մէն մի ասպետ երեք անգամ 'ի վէզ ելաւ և երեք ոտիս զետին տապալեց : Ա՛յաւելում նաև , որ այն ոտխներէն եօթ հոգի տաճարական ասպետներ էին և Պրայն տը Պուա — Սիլպէր այս ըսածին ճշմարտութեան կրնայ վկայել :

Անհնար է լեզուաւ նկարագրել տաճարականին կատղութիւնն որով իր սև գէմքն աւելի ևս սևցաւ . իր տառելութեան և շփոթութեան չափն անցնելով իր զոյղոյն մատերը գէպ իր սրին դաստապանին տարաւ , ապա թողուց , և թերեւ զգաց որ կարելի չէր բռնութեան գործ մ'ընել ապահովութեամբ այն տեղ ներկայ գտնուողներուն առջև : Սէտրիկ՝ որուն զգացումները միշտ ուղիղ էին և անկեղծ՝ չէր կրնար շատ բաներու մէկէն ուշ գնել , ուստի այնքան բերկրութիւն զգաց իր հայրենակիցներուն փառքն ու արիութեան զովեստը լսելով՝ որ չլիտեց իր հիւրին զայրալիւ շփոթութիւնը :

— Ոսկի ապարանջանը յօժարակամ պիտի պարզեմ , քեզ , ուխտաւոր — ըսաւ նա — եթէ ըսես ինձ , այն ասպետներուն աշուններն որ զուարթուն Անկլիոյ համբաւն արիաբար պահպանեցին :

— Ամենայն սիրով խնդիրդ պիտի կատարեմ — պատասխանեց ուխտաւորը — առանց վարձ մ'ընդունելու, վասն զի իմ երդումս, դեռ քիչ մ'ատենուան համար, ոսկիի դպելու կ'արդիւլէ զիս :

— Ապարանջանն ես քու տեղդ կ'առնում, եթէ կ'հաճիս, աղջիւ ուխտաւոր — ըսաւ Վամպա :

— Պատուոյ և արիւթեան, նոյնպէս համբաւի և պաշտօնի կողմէ առաջինն էր — ըսաւ ուխտաւորը — արին Բիչարա, Անկլիոյ թագաւորը :

— Կ'ներեմ — ըսաւ Սէտրիկ — կ'ներեմ անոր՝ Վիլյէմ բրուհակալ դքսէն սերելուն :

— Երկրորդն էր Լիսէսդրի կոմսը — շարունակեց ուխտաւորը. — Նիսլէնտի Թոմաս Միւլլըն երրորդն էր :

— Գոնէ այս վերջինը սաքսոնեան տոհմէ կ'սերի — ըսաւ Սէտրիկ եռանդազին :

— Չորրորդն էր Փուլք Տուայլի սեպուհը — շարունակեց ուխտաւորը :

— Այս ևս սաքսոն է դէթ մօրը կողմէն — յարեց Սէտրիկ, որ ուշադիր մտիկ կ'ընէր, և ըստ մասին կ'մոռնար իր սին նօրման ցեղէն դէմ, Անկլիոյ թագաւորին և իր կղզեցիներուն արիւթեան հռչակն իմանալուն : — Եւ ո՞վ էր հինգերորդը — հարցուց նա :

— Հինգերորդն էր Թըրնհէմ Խամլին սեպուհը :

— Բուն սաքսոն մը, Հէնժիստի հոգին վկայ — գոչեց Սէտրիկ : — Հասրա վեցերորդը — շարունակեց նա շտապաւ — ինչ է վեցերորդին անունը :

— Աեցերորդը — ըսաւ ուխտաւորը արհ մը կայ առնէն ետեւ, որպէս թէ անունը յիշելու կ'ջանար — նորասի ասպետ մ'էր, որ աւելի քիչ համբաւ և ստորին աստիճան մ'ունէր, և այն պատուաւոր դնդին յարած էր ոչ այնչափ աջակից դանուէրու՝ որչափ անոր թիւը լեցնելու համար. իր անունը միաբէս ելեր է :

— Պարոն ուխտաւոր — ըսաւ Պրայն քամահական ձայնով մը — այնչափ բաներ յիշելէն ետեւ՝ վերջնոյն անունը կամովին կը մոռնաս և քու նշատակիդ չես կրնար հասնիլ : Ես ինքնին պի-

տի ըսեմ այն ասպետին անունն՝ որուն նիղակին առջև՝ բաղդն ու իմ երիվարիս յանցանքն անկմանս սրտաճառ եղան, այն ասպետն էր Իվանօէ, և այն վեց անձերուն մէջ՝ թէ և նորատի, իրմէ աւելի նշանաւոր մարտիկ մը չկար: Սակայն այս ևս կը փութամ ըսելու, որ եթէ այն ասպետը հիմակ Անկլիա գտնուէր և այս շարթուան լինելէք նիղակամարտին մէջ ինձի հետ՝ այսպէս սպառնալէն չափուիլ և Աքիաի մենամարտը կրկնել կամենա՞ր՝ զինուոյ առաւելութիւնն անոր կ'ընծայէի և հետը նորէն ի վէճ կ'եւնէի:

— Եթէ ոսոխդ քովդ լինէր — նպատասխանեց ուխտաւորը — իսկոյն կ'ընդունէր այդ մենամարտը (challenge): Սակայն քանի որ ներկայ չէ նա, մի վրդովեր քու պարծուի խօսքերովդ այս տան անդորրութիւնն՝ այն մենամարտին ելքին վրայ, քանի որ գիտես թէ չկրնար տեղի ունենալ: Եթէ երբէք Իվանօէ Պաղեստինէն դառնայ, կ'ապահովեմ որ քեզի հետ չափուելու չափ տի վարանի:

— Աղոթ ապահովութիւն — սրտասխանեց տաճարական ասպետը — ազա ինչ դրաւ կ'դնես այս բանիս համար:

— Սա մատուցը — ըսաւ ուխտաւորը, և իր ծոցէն փոքրիկ տուփ մը հանեց, խաչակնքեց — որ կարմեւեան լեռնէն բերուած ճշմարտին խաչի մաս մը կ'պարունակէ:

Ժօրվոյի վանահայրն ևս խաչ հանեց և հայր մեր մ'ըսաւ, որուն ամենքը միացան, ի բաց առեալ հրէայն, մահմետականներն և տաճարականը, որ առանց գտակն հանելու կամ ակնարկեալ մատուցին սրբութենէ ակնածելու, վզէն ոսկի շղթայ մը հանեց և սեղանին վրայ նետելով ըսաւ. — Թող Էյմէր վանահայրն իմ և այս անանուն թափառականին զրաւն առնու պահէ, իբր ի հաստատութիւն որ երբ Իվանօէ ասպետը չորս ծովերը պատու Բրիտանիոյ կզգին ոտք կոխէ, Պրայն տը Պուա-Նիլպէրի մենամարտը պիտի ընդունի, և եթէ զայն մերժէ՝ բռնոր Եւրոպայի տաճարականներու դարպասին մէջ իբր վատ սկիտի հռչակեմ զանի:

— Այդ բանն ընելու պէտք չպիտի լինի — ըսաւ Բովէնն՝ իր լռութիւնը՝ զոր ցայն վայր պահեր էր խզելով: — Եթէ այս սրահին մէջ տարակայ Իվանօէն պաշտպանող ձայն մը չկայ,

իմն հարկաւ պիտի լսուի : Ա՛հաւաստեմ՝ որ նա պատրաստ պիտի դառնուի ամէն սլաքաւոր մենամարտի արիաբար պատասխանել : Եթէ իմ ակար երաշխաւորութիւնս սոյն բարեպաշտ ուխտաւորին անդին զրաւին արժէքը կարող է աւելցնել, անունս և պատիւս զրաւ կ'դնեմ՝ ստոյգ լինելով որ Իվանօէ այս գոռոզ ասպետին հետ պիտի մենամարտի :

Ա՛րեւէր թէ նոյն պահուն իրարու ներհակ զգացումներ Սէտրիկի սիրտը պաշարած լինելով՝ չէր կրնար խօսիլ սոյն վիճաբանութեան ժամանակ : Գոհունակ հսրարտութեան, քինու և ընփոթութեան նշաններն իր լայն և կայտառ ճակտին վրայ իրարու կ'յաջորդէին, ցորենի արտի վրայ անցնող ամպերու ստուերին նման, մինչդեռ իր սպասաւորները, որոց վրայ վեցերորդ ասպետին անունը դրելով գիւթական ներդործութիւն մ'ունէր, իրենց արիւղ կ'նայէին ակնապիշ : Սակայն երբ օրիորդ Բովէնան խօսեցաւ, անոր ձայնին հնչիւնը կարծես թէ Սէտրիկի թմրութիւնը փարատեց :

— Օրիորդ — ըսաւ Սէտրիկ — այդ խօսքը քեզի չ'վայելի : Եթէ ուրիշ զրաւ մը պէտք լինէր, ես ինքս որ իրաւի նախատւած եմ, Իվանօէին համար իմ պատիւս զրաւի կ'դնէի : Բայց մարտին զրաւը կատարեալ է, նոյն իսկ նօրմանեան ասպետութեան այլանդակ կանոններու համեմատ : Միթէ ըսածս ճիշտ չէ, հայր Էյմէր :

— Ճիշտ է — պատասխան տուաւ վանահայրը : — Եւ ես այս օրհնեալ մասունքն ու ճոխ շղթան մեր վանքին զանաւորան մեջ ապահովապէս պիտի պահեմ, մինչև որ մենամարտութեան արդիւնքը տեսնուի :

Այսպէս խօսելով՝ վանահայրը կրկին ու կրկին խաչ հանեց և շատ մը ծոռնը դնելէն և աղօթք ընելէն ետեւ՝ մասունքն իրեն սպասաւորող եղբայր Ամփրոսիոսի տուաւ, մինչդեռ նուազ յարգանք, թէև նոյնչափ սրտի գոհունակութեամբ ռսկի շղթան առաւ և իր թևին ներքեւ գտնուած կաշխատատ փաքբիկ զրպանին մէջ զրաւ : — Արդ, արդոյ Սէտրիկ — ըսաւ նա — քանի որ ականջներս զանդակի պէս կ'խօսին ձեր ընտիր զինին շնորհիւ, ներեցէք մեզ օրիորդ Բովէնայի կենդանութեան բաժակ մ'եւս նշարպել, և ապա հրամանս տուէք մեզ հանդստանալու երթալ :

— Պրօնհորմի խնջը վիայ — ըստ սաքսօնը — քու համբաւիդ մեծ պատիւ մը չես բերեր, պատուարժան վանահայր: Զուարթ եկեղեցականի մ'անունն ունիս, և կ'ըսեն թէ ժամկոչը զալէն առաջ բաժակը ձեռքէ չես թողուր: ասոր համար՝ թէ և ծեր եմ, կ'վախնայի որ քեզի հետ զլուխ չպիտի ելնեմ: Բայց, իրաւի, տանն երկու տարու սաքսօն պատանեակ մ'իմ ժամանակս այդ չափ շուտով գինիի բաժակը մէկդի չէր թողուր:

Սովայն վանահայրն իր ընտրած ժուժկալութեան գրութեան հետեւելու պատճառներ ունէր: Այլ միայն 'ի պաշտօնէ հաշտութար էր, այլ 'ի փորձ կ'ստէր ամէն տեսակ կռիւներ, և վէճեր: Եւ այս ընթացքը չէ թէ անձնասիրութենէ կամ մարդասիրութենէ կ'բռնէր, այլ այս պարագայիս մէջ սաքսօնին խրոխտ բռնութիւնը կ'ձանչէր և կ'վախնար որ իր ընկերին աննկուն և անհնապաստան ոգին՝ որուն փորձերն արդէն ստէպ տեսեր էր, նոյն ընկերութեան մէջ փոթորիկ մը չհանէ: Աւստի մեղմօքէն հասկացող որ անհար է որ և է օտար բնակչի մը՝ յանդուգն ու պնդազլուխ սաքսօններու հետ միցիլ այս մասին: Նոյնպէս կամացուկ մ'իւր նուիրական պաշտօնին վրայ քանի մը խօսք մըմը՝ ռայ, և խօսքն աւարտեց ներում խնդրելով որ հանգստանալու երթան:

Ջեռեապէս վերջին բաժակը լցին, և հիւրերը տանտիրոջ և օրիորդ Բովէնաին յարգական խոնարհութիւն մ'ընելէն ետեւ՝ դաւաթները պարպեցին, յետոյ իրարու խառնուեցան, մինչդեռ տան մեծերն իրենց սպասաւորներու հետ այլ և այլ գոներէ գուրս կ'ընէին:

— Անհաւատ շուն — ըստ տաճարականը հրէսց Խաչակին, այն միջոցին որ ամբոխին հետ իր քովէն կ'անցնէր — արդեօք դո՞ւ ալ գուպարը տեսնելու պիտի երթաս:

— Այդ միտքն ունիմ — պատասխան տուաւ Խաչակ խոնարհութեամբ ծռելով — եթէ ձեր արժանապաւիւ քաջութեան անհաճոյ չթուիր:

— Այո՛ — ըստ ասպետը — որպէս զի մեր ազնուականներուն արիւնը քամեւ վաշխառութեամբ, և կիներն ու պատանիները խաբէս քու զոհարներով և խաղալիկներովդ: Գրաւ կ'ընեմ որ սա պարկիկ մէջ տնքաւ ոսկի կայ:

— Ո՛չ ոսկի, ոչ դահեկան և ոչ իսկ լծանկ մ'ունիմ. Արբա-
համու Աստուածն օղնէ ինձ — ըսաւ հրէայն ձեռները պրկելով :
Սոյն հանդիսին պիտի երթամ որ իմ ազգակից եղբայրներէս նը-
պաստ խնդրեմ որպէս զի հրէից Գանձապետին իմ վրայ դրած
հարկը վճարեմ. Յակոբ նահապետ պահպանէ զիս. աղքատ
թշուառ մ'եմ, նոյն իսկ հաղած վերարկուս Թատկասորի Ռու-
բէնինն է :

Տաճարականն այս պատասխանին վրայ քթին տակէն խնդաց.
— Կողմից արմատը, նայէ ինչ չարասիրտ ստախոս մ'է — ը-
սաւ տաճարականն և յառաջ անցաւ, որպէս թէ հրէին հետ
խօսքն երկարելու կ'անդոսնէր, և ներկայ զմեռողներուն ան-
ձանթ լեզուով մը սարակի՛նացի զերիներուն բան մ'ըսաւ : Հէք
խրայէլացին մարտիկ կրօնաւորին յանդիմանական ձայնէն այն-
քան շուարեր էր որ տաճարականը սրահին միւս ծայրը հասնե-
լէն ետև միայն սիրտ ըրաւ այն իր նուաաս գիբբը թողլով զը-
լուխը վերցնելու՝ որ տեսնէ թէ գուրս ելնելու ժամանակը հա-
սաւ թէ ոչ : Երբ վերջապէս չորս զին նայելու ելաւ, այնպէս
ապշած էր որ կարծես թէ իր առջևը կայծակ մ'իջեր էր և ա-
նոր որոտալիք ձայնը գեւ իր ականջին մէջ կ'հնչէր :

Տաճարականն ու վանահայրն անմիջապէս իրենց ննջարանը
մտան անտեսին և մասառակին առաջնորդութեամբ, ամէն մէկն
երկու ջահակիր և երկու սպասաւոր առեր էր իր հետը, որոնք
զինի և ուտելիք կ'տանէին, մինչդեռ ստորնագոյն ծառաներ ա-
նոնց հետևորդներուն և միւս հիւրերուն պառկելու համար յա-
տուկ յատուկ տեղեր կ'ցուցնէին :

ԳԼՈՒԽ Զ.

Իր շնորհը գտնելու, իմ սիրտս կ'տամ.
Եթէ ընդունի, լաւ, թէ ոչ, մնաս բարե,
Եւ, իմ սիրտս համար, խնդրեմ ինչ մի մնասէր:

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Երբ ուխտաւորն՝ որուն առջեւն ջահակիր մը կ'երթար, այս ընդարձակ և անկանոն տան պատ ի պատ սենեակներէն կ'անցնէր, ետէն եկող մատուռակն անոր ականջին փսփսաց որ՝ եթէ հաճի իր խուցը դալ և բաժակ մը մեղրմսելի ընկել, շատ մը սպասաւորներ կան որ անձկանօք պիտի լսեն Երուսաղէմէն բերած լուրերը, մանաւանդ Իվանօէ ասպետին վերաբերեալ զրոյցները: Նոյն պահուն Վամպա վրայ հասաւ և նոյն խնդիրը կրկնեց, յայտնելով որ կէս գիշերէն ետքը բաժակ մը մեղրմսելի աւելի մեծ արժէք ունի քան կրակաթաղէն առաջ: Այսպիսի ծանր պատգամի մէջ բերած առածին դէմ առարկել աւելորդ սեպելով՝ ուխտաւորը շնորհակալ եղաւ անոնց մարդավարութեան, բայց սա կէտը հասկցուց որ իր կրօնական ուխտին հետ պարտաւորութիւն մ'առած է իր վրայ, այսինքն, տիրոջ որահին մէջ արդիւեալ բաներուն վրայ բնաւ չխօսիլ խոհանոցը: — Ահաւասիկ ուխտ մը — ըսաւ Վամպա մատուռակին — որ ըսպասաւորի մը բնաւ չյարմարիր:

Մատուռակը դժկամակելով ուսերը վեր վերցուց: — Ես այս ուխտաւորին լաւ սենեակ մը տալու միտք ունէի — ըսաւ, — բայց քանի որ պաղ կ'վարուի քրիստոնէից հետ, ես ալ զանի Խաչակի հրէին կից սենեակը պիտի դնեմ: Ենվօլտ — յարեց նա ջահակիր ծառային դառնալով — սա ուխտաւորը հարաւային խղիկը տար: Գիշեր բարի քեզ, արգոյ ուխտաւոր, քիչ մարդավարութեան թեթեւ շնորհակալութիւն կ'վայելէ:

— Քեզ լոյս բարի, և տիրամայրը քեզ օրհնէ — ըսաւ ուխտաւորը հանդարտ և իր առաջնորդին հետեւելով:

Այն ինչ նեղ նախասենեակ մը մտան որ շատ դռներ ունէր

և երկաթէ կանթեղով մը լուսաւորած էր, Բովէնաի սպասուհիներէն մին իրենց առջև ելաւ, որ իշխանական ձայնով մ'ըսաւ թէ իր տիրութիւն ուխտաւորին հետ խօսիլ կ'ուզէ. ուստի Էնվօլտին ձեռքէն ջահն առաւ, ապապրեց անոր որ վերադարձին սպասէ և ուխտաւորին նշան ըրաւ որ ետևէն երթայ :

Ա՛րեւի թէ ուխտաւորը յարմար չգտնեց այս հրաւերը մերժելու, ինչպէս որ մատուակինը մերժեր էր, վասն զի թէև կերպերէն կ'իմացուէր որ զարմանք կ'զղայ, անխօս և անմուռնչ սպասուհիին հետևեցաւ :

Նորբաղաւթէ մ'անցնելով՝ եօթ աստիճանով սանդղէ մը վեր ելան, որոց իւրաքանչիւրը հաստ կաղնի դերանէ շինուած էր, և օրիորդ Բովէնաի սենեակը հասաւ, որուն շքեղութիւնը կ'համապատասխանէր սանտիրոջ անոր ցոյց տուած յարգանայց: Պատերն ոսկեթել մետաքսէ վարագոյրներով ծածկուած էին և դարուս տարած ամէն արհեստը թափեր էին որպէս զի զոյնզոյն որսորդութեան և բաղէի տեսարաններ ներկայեն : Մահիճը նոյն ճոխութեամբ զարդարուն՝ և ծիրանի վարագոյրներով շրջապատուած էր, ամթուներն ալ գունաւոր կերպասով ծածկուած էին, և անոնց մին որ միւսներէն աւելի բարձր էր՝ վարի կողմը զբոլած ճարտարութեամբ քանդակուած փղոսկրէ ամբողջ մ'ունէր :

Չորս հաս արծաթէ աշտանակներ՝ մեծ մմեքով՝ սենեակը կը լուսաւորէին : Սակայն պէտք չէ որ մեր արդի դեղանի կիները սաքսօն իշխանուհոյ մը շքեղութեան նախանձին : Սենեկին պատերն այնպէս թերակիտար և ծերսլալի էին որ պերճ սրահակները հովէն կ'շարժէին, թէև տեսակ մը հովանեակ (screen) դրեր էին հովէն պահպանելու համար. ջահերուն բոցն օդին մէջ ասդին անդին կ'տատանէր հրամանատարի մը զրոշակին պէս : Շքեղութիւնը կ'տիրէր նոյն սենեկին մէջ, վայելչութեան հասնելու փորձեր կ'տեսնուէին, սակայն զիւրատարութիւն գրեթէ չկար, և որովհետև այս բանս չէին գիտեր, անոր կարօտութիւնը չէին զգար :

Օրիորդ Բովէնան մեր արդէն յիշած դահին վրայ նստեր էր, իր չորս գին երեք նաժիշտներ առեր մաղերը կ'սանտրէին անկողին մասնէն առաջ, և կարծես թէ ամենուն ակնածութիւնը գրաւելու բնածին ձիրք մ'ունէր : Ուխտաւորն այս ակնածական

յարդանքը մատոյց անոր խորին ծնրադրութիւն մ'ընելով :

— Ուր ելիր , ուխտաւոր — ըսաւ անոր շնորհալի կերպով մը — բացակայից սրաշտպանն իրաւունք ունի սիրով ընդունուելու այն ամէն անձերէն որ ճշմարտութիւնը կ'սիրեն և արիւթիւնը կ'սպասուեն — : Այն ատեն իր նաժիշտներուն ըսաւ . — Պաղէք , դու միայն կեցիր , Էլժիթա . այս սրբակրօն ուխտաւորին հետ քիչ մը պիտի խօսիմ :

Սպասուհիները սենեկէն դուրս չեւնելով՝ հեռաւոր անկիւն մը քաշուեցան և պատին կից բաղմոցի մը վրայ նստան՝ իբր քարէ տրձաններ , թէ և այն հեռաւորութենէ իրենց փափսոքը չէր կրնար վրդովել տան տիրուհւոյն խօսակցութիւնը :

— Ուխտաւոր — ըսաւ Բօլէնա՝ պահ մը լուռ կենալէն ետեւ , վառն զի կ'սորհէր թէ ինչ կերպով խօսքն ուղղէ օտարակաշին . — այս իրկուն դու անուն մը յիշեցիր , այսինքն — յարեց նա ճիգ մ'ընելով — Իվանօէի անունն , որուն հնչիւնն ազգակցութեան և բնութեան շնորհիւր պարտ էր աւելի շարժէր մեր սիրտերը , սակայն՝ ճակատադիրն այնքան անիրաւ է որ այն սրբատեղուն մէջ՝ ես միայն կ'իշխեմ հարցնելու քեզ թէ ո՞ր և ի՞նչ աստիճանի մէջ թողեր այն ակնարկած անձը : Իմացանք որ իր առողջութիւնը կազդուրելու համար Պաղեստին մատուց ստիպուած լինելով՝ անկիլիական բանակին մեկնելէն ետեւ՝ զաղղիացի զօրաց երեսէն հալածանք կրեր է , որոց , ինչպէս որ յայտնի է , տաճարականները յարած են :

— Շատ բան չգիտեմ Իվանօէ ասպետին վրայ — պատասխանեց ուխտաւորը՝ այլայլած ձայնով մը : — Ափափաքէի լաւ ևս ճանչել զանի , քանի որ դու , օրիորդ , անոր վիճակին մեծ հոգ կ'տանիս : Արթւեմ թէ իր թշնամիներուն ճանկէն հեռացաւ և Պաղեստինէն Անկիլա դառնալու կ'պատրաստուէր . և դու , արիւժիս , պէտք է որ իզնէ քաջ դիմնաս թէ ինչ երջանկու թիւն կ'սպասէ իրեն :

Օրիորդ Բօլէնա խորին հառաչեց , և յատկապէս հարցուց թէ արդեօք Իվանօէ ասպետն երբ պիտի դառնայ իր հայրենի երկիրն և թէ ճամբան վտանգի կրնայ հանդիպիլ : Առաջին կէտին նկատմամբ ուխտաւորն իր տգիտութիւնը յայտնեց , երկրորդ հարցման վրայ՝ ըսաւ թէ Վենետիկ և Ճէնովաի ճամբով

ապահովել կրնայ ֆրանսա և անկից Անկլիա անցնել: — Իվանօֆ — ըստ նա — այնքան հմուտ է ֆրանսաի լեզուին և բարուց որ սոյն ճամբորդութեանը մէջ փորձանքի մը հանդիպելու վախ չը կրնար ունենալ:

— Երանի թէ — ըստ օրիորդ Բովէնա — անվտանգ իր բընիկ երկիրը հասնէր, և կարող լինէր մօտալուտ նիզակամար տին մէջ պայքարել, քանի որ տեղեցի բոլոր ասպետներն իրենց արիութիւնը պիտի ցոյց տան այն տեղ: Եթէ Գօնիկս պլըրիկ Աթէլսթէյնը մրցանակը տանի, թերես Անկլիա հասնելուն Իվանօֆ արտուր լուրեր սրտի լսէ: Օտարական, վերջին անգամ զանի տեսնելու քնչպէս դտար: Միթէ հեռանդութիւնն անոր ոյժն ու վայելչութիւնը սաստիկ խանդաբեր էր թէ ոչ:

— Աւելի թուիս և նիհար երես մ'առեր էր — ըստ ուխտաւորը — քան թէ երբ Առիւծասիրտ Բիչարտին հետ Կիպրոս կըզգէն դարձաւ, և կարծես թէ ճակտին վրայ անձկութիւն մը կը տրէր, բայց ես անոր մօտ չդացի, որովհետեւ հետը յարաբերութիւն չունիմ:

— Իվաննամ որ իր բնիկ երկրին մէջ — ըստ Բովէնա — այնչափ սփոփանք չպիտի դտնէ իր արտմութեան մաւայլը փարատելու: Շնորհակալ եմ, բարեսիրտ ուխտաւոր, որ իմ մանկութեանս ընկերին վրայ այդ տեղեկութիւնները հաղորդեցիր ինձ: Աղջկներ — յարեց նա — մօտեցէք և երեկոյեան բաժակը մատուցէք այս սուրբ մարդուն, որուն թոյլ պիտի տամ որ երթայ հանդիստ ընէ:

Սպասուհի մ'արձաթէ բաժակ մը ներկայեց որ ընտիր համեմուտ ըմպելի մը կ'սպարունակէր: Բովէնա նոյն բաժակը միայն շրթերուն դպուց և ապա ուխտաւորին տունն գտն, և այս ալ թեթեւ խոնարհութիւն մ'ընելէն ետեւ քանի մը կաթիլ ըմպեց:

— Ընդունէ այս ողորմութիւնը, բարեկամ — յարեց Բովէնա ոսկի մ'ընծայելով — իբր վարձ քու աւժանելի աշխատութեան, և Սուրբ վայրեր այցի գնալու համար:

Ուխտաւորը նորէն թեթեւ մը ծուրով ընդունեց այն սլարդեն և սենեկէն դուրս ելաւ Լէժիթի ետեւէն երթալով:

Նախասենեկին մէջ Ինվօլտ սպասաւորը գտաւ, որ նորատի աղջկան ձեռքէն ջահն առնելէն ետեւ շտապաւ քան մարդաւա-

խոթեամբ շէնքին մէկ հեռաւոր և զագրալի կողմը տարաւ ձղեց զանի, ուր շատ մը փոքրիկ խուցեր կամ խղիկներ կային, որոնք ստորին ծառաներուն և միջին կարգի հիւրերու համար ննջարաններ էին :

— Այս խուցերէն որուն մէջ կ'պառկի հրէայն — հարցուց ուխտաւորը :

— Այն անհաւատ շուներ — պատասխանեց Էնփօլտ — քու սըրբութեանդ կից խցին մէջ կ'սատկի : Յանուն Ս. Տոնատանի, ինչպէս պիտի քերթենք և սրբենք այն խուցն որպէս զի քրիստոնէի մը յարմար լինի :

— Հապա խողարած Սիւրթն ո՞ր կ'պառկի — ըսաւ օտարականը :

— Սիւրթ — պատասխան տուաւ սարուկը — աջ կողմի խուցը կ'ընտնայ, ինչպէս որ հրէայն ձախ կողմդ կ'դառնայ. դու պիտի դատես թլփատեալ մարդը իր ցեղին ատելութեան առարկայ եղող անձէն : Եթէ Օսմալտի հրաւերն ընդունէիր առեւի պատուաւոր սենեակ մը պիտի ննջէիր :

— Այսպէս աղէկ է — ըսաւ ուխտաւորը — հրէի մ'ընկերունքները կաղնի փայտէ միջնորմի մը մէջէն չկրնար տարափնիլի լինիլ :

Այս ըսելով իրեն յատկացած խուցը մտաւ, և սպասաւորին ձեռքէն քահն առնելով՝ անոր շնորհակալ եղաւ և բիշեր բարի ըսաւ : Իր խցին դուռը դոցնելով՝ փայտէ աշտանակի մը վրայ դրաւ ջնհը և իր ննջարանին բոլորտիքը դիտեց, որուն կահոյքը շատ պարզ էր : Մինակ փայտէ կոշտ աթոռանէ, և առեւի գրծած յարգալի անկողնէ մը կ'բաղկանար, որուն վրայ քանի մը ոչխարի օղիկներ նետեր էին վերմակի տակ :

Ուխտաւորը՝ ջահը մարեւելն ետեւ՝ հազուած այն կարծր մահճին վրայ ընկաւ և քնացաւ, կամ ըստ ևս այնպէս պառկած մընաց մինչև որ արեւուն առաջին նշնայներն վանդակաւոր պղտիկ պատուհանէ մը ներս մտան, պատուհան մ'որմէ այս զազիր խուցն օդ ու լոյս կ'թափանցէին : Այն ատեն ուխտաւորն հագ բլաւ, իր առաւօտեան աղօթքն ըսաւ, վրան գլուխը շոկեց և դուրս ելնելով՝ Իսահակին խղիկը մտաւ գոնակը կրցածին չափ մեղմիկ վերցնելով :

ԲԱՆԱՀԻՒՍԱԿԱՆ

Տ. Գ. ՊՍԿԱՆԵԱՆ

Այս նշանաւոր աղբային վեպասանին մէկ անտիպ դիւցազներգը՝ զոր հեղինակին կողմէն սիրով ստացանք, մաս առ մաս մերացնէից սկիսի հազորդենք հանդիսիս այս յատուկ յաւելումով: Սեփական քերթողին աշունն ու սքանչելի երկերն արդէն ամէն հայ բանասէրներու ծանօթ են: Աոր գողթան երգին, նոր Հայաստանի վեպասանը թէև հնոյն աւերակաց մէջ նստած կերդէ, իր խանդովն ամէն հայու սիրտ կ'վառէ, կ'զմայէ և իր աննման, անուշ, զգայուն և ներդաշնակ քնարով մեղուրիշ աշխարհ մը, մեր Հարց սրբաւայրը կ'տանի և անդ կ'բանայ մեր տուչ և Հայկայ սերնդին հետեւելք տրահետը:

Արդէն Սեփ. Ս. Ս. Սիւնսարեանց՝ իր Քնար Հայկական մէջ՝ մեր աղբային վեպասանին վրայ համառօտ կենսագրական ծանօթութիւն մը տուած է, որմէ քաղելով աստանօր մի քանի խօսք կ'ըսենք:

Գեր. Տէր Գաբրիէլ Պատկանեան ծնած է Տիիսիս քաղաքը 1802ին: Իր ուսումը նախ իր հօրմէն և ապա Եթտերխանու ուսուցչի ուսումնարանէն ստացաւ և տեղւոյն հայ դպրոցին մէջ դասատուութեան պաշտօն վարեց, ինչպէս նաև ի Նոր Նախիջևան, իր քահանա-

յախան պաշտօնն ալ կատարելով: 1845ին Տփլիս վերադառնալով՝ Սերսիսեան վարժարանին վերատեսուչ կարգեցաւ, և Առկա հայերէն լրագրին գործակից եղաւ, նոյնպէս և Արարատ շաբաթաթերթին խմբագիրը: 1863էն վեր ՚ի Ս. Պետրղպուրի կ'գտնուի, և մինչդեռ ծերունի բանահիւսը հին պատմութենէ և իր վառվռուն երեւակայութենէ պատմանեկան աշխոյժ և աւիւն կ'ընդունի, թերեւս վշտահար սրտով, մենք կ'հրճուինք, կ'սնանինք անոր ընտիր ընտիր երգերով և սարկութեան և հեռաւորութեան դառնութիւնները կ'մոռնանք...:

Մ. Մ.

ՊԱՅԱՐԵՆ

ԵՐԴ Ե.

ԵՌԱԽՈՏ

- 1 Երկնէն երկինք, երկներ և երկիր,
Երկներ ծիրանի ծովն լայնածիր.
Երկն ՚ի ծովու անդ ունէր զեղէզնիկ
Երկն ՚ի ծով ունէր զեղէզնիկ կարմիր:
- 2 Ընդ եղեղան փող ծուխ մեծ ելանէր.
Ընդ եղեղան փող բոց արտափայլէր.
Ի միջոյ բոցոյն բիւրաշող հրոյն,
Հրավառ բորբոքեալ սրտանեակ վաղէր:
- 3 Նա հուր հեր ունէր, հոպոսիք ցոլունք,
Բոց էին ծամք իւր և մօրուք փայլունք,
Արիակէզ զիտակ, աղուամազ զիտակք,
Իւ աչքունքն էին վառ արեգակունք:

- 4 Հրաշէկ եղեղին բոց ծայրակարմիր ,
 Կռուեալ յԱրուսեակ՝ հոսեաց յԱրմաւիր ,
 Ճիւ ամբարձ հրակէզ աստղ առաւօտին ,
 Յերաշխէպ երկանց կաշկանդեաց զերկիր ։
- 5 Յնդեալ Արուսեակ ՚ի ցօղ արտասուաց ,
 Աստղաբոյլ պարուց զիւր կտկան յօդեաց ,
 Զի՞ սուրաս խարտեաշ զոռլ պատանի ,
 Զի՞ ճեպես , վազես՝ հանդոյն փայլականց ։
- 6 Վաղվաղեմ , ողեաց հրափայլ պատանին ,
 Որոյ հերք հրաբուղի բոցով փայլէին ,
 Կանուխ այգորել վնորածին զիւցազն ,
 Զոր երկնէ ընդ երկնից Զարուհի Տիկին ։
- 7 Թափեսցեն զքուն հարսունք անդէորդք ,
 Գիշերավարիդ տքնութեան հաղորդք ,
 Լուսցեն զլստսերս յանաղօտ ասուքս
 Յոր ճրագալոյց խայտան բիւրաւորք ։
- 8 Խայտան բիւրաւորք տան առքանաղեան ,
 Առ դահ Պարոյրայ աւետիս բառնան ,
 Թէ յերկունս երկրի երկնէ Զարուհի ,
 Եւ յերկնէ երկնից խայտայ Հայաստան ։
- 9 Ի ծով ծիրանի վիճակ զեղամեան ,
 Ուր զեղածիծաղ լողանայ Սեւան ,
 Երկունք ծննդեան կալեալ զեղէգնիկ ,
 Բարդէր ՚ի կոհակս սրավար Հրազդան ։
- 10 Լսելի լիցի յԱւան Վարդգեսի ,
 Եւ Քասալ կացցէ ՚ի զլուխ հանդիսի ,
 Անդ Արտիմեդին փուլք աւերակաց ,
 Ծպտեսցին հովտաց բլրոյն Շրրեզի ։
- 11 Ի տանէն Տուրհայ զաղթեալ ժիր մանկան ,
 Կոփել զբարաւորս երուանդեան դրան ,
 Սերկ հասցէ կանգնել դրանդս ՚ի վիմաց ,
 ՅԱնահտայն տաճար յեղեալն ՚ի կործան ։
- 12 Անդ Լուսաբերին սիրոյն միածին ,
 Եղիտ զարդեւան չքնաղ իւր հարսին ,
 Եւ զոր Պարետի ձեռք էին կերտեալ ,
 Հրրաչեայ տապաստ էարկ ՚ի գետին ։

- 13 Հուրաստան ծափէր ալեօք իւր ծփմանց ,
Հրճուէր ընդ ոլորտս ժայռալիր ափանց ,
Զի մանուկ հրալից զրոշմէր զիւր զխտակ ,
Ի սեռն ասպակի վճիտ մկանանց :
- 14 Արշալոյս մերկեալ զիւր քող ծիրանի ,
Զոսկեթել օթոց երկնից խորանի ,
Անց հանդարտաքայլ ընդ հին Արաիմէդ ,
ՅԱրմաւիր էպու զկայ վայրիկ մի :
- 15 Շրշին շղարշին , բուրումն 'ի շնչոյն ,
Որում զմայլին վարդ.ք , ծաղկունք համբուն ,
Նախ 'ի թռչնակայ զառակայ բնութեան
Եւ հոսկ 'ի մարդոյ մերժեցին զբուն :
- 16 Հնչեաց յԱրմաւիր 'ի մայր քաղաքաց ,
Զայն բերկրապատար , քարբառ աւետեաց ,
Խուժեցին համակ զունդ.ք ասքանազեան ,
Բաժանորդ լինել անճառ հրճուանաց :
- 17 Դայր փանդեռնահար զափամբ Երասխայ ,
Լնոյր հրճուանօք յերկանց Զարուհեայ ,
Եւ զերկունս երկնի , երկրի և ծովու ,
Յերդ. առնուլ ընտրէր 'ի սէր տան Հայկայ :

ԵՐԳ Բ.

ՏԵՍԻԼ ԵՐԳԱԲԱՆԻ

- 1 Յաւերժահարսն պարեկ պարտիկաց ,
Ի բարունակէ փայլուն ողիւղաց ,
Տարուբերելով որսէս յորորան ,
Հնչէր մեղմազին 'ի գիլ մրդուղաց :
- 2 Ընդէր անթիթիթ սլնուս զմայլեալ ,
Ի մանուկ խաբտեալ 'ի ծովէն ծնեալ ,
Կամ զի՞ ընդ երկնել երկնի և երկրի ,
Ի ծով ծիրանի զաչսդ ունիս յառեալ :
- 3 Էջ յայդ օղապար վերնադառաւէդ ,
Անց ընդ Հրազդան և ընդ Արաիմէդ :

- Փութա՛ յԱրմաւիր , և դայեա անդէն ,
 Զոր տարփով խնդրես յանգօր քո տաւղէդ ։
- 4 Մինչ ասկզբնածին որդին զիշերոյ՝
 Տեղի տայր անշէջ փոսուրեան հրոյ ,
 Այդ երկունք երկնից՝ յօրէ յայնմանէ ,
 Զուգակցին երկանց ծովու ծիրանոյ ։
- 5 Որ զերկնաւ երկնէր , երկնեսցէ կրկին ,
 Եւ չիք կատարած երկանց և երկրին ,
 Այլ համանրման յԱրմաւիր երկանց ,
 Ոչ երկնեսցի ինչ երբէք վերստին ։
- 6 Եղձ քերթողահօր էր վայն հանճարեալ ,
 Եւ վաղանցելոց յուլունս պարուրեալ ,
 Այլ անց այն կայթից ամ և ամանակ ,
 Ազգ քո այն երգոց չ'և է կաթողնեալ ։
- 7 Նա՛ հազարաւոր ամբ անջրպետ կան ,
 Եւ Արմաւիրայ հիմն չէ յերևան .
 Հնչեան փանդումաւուդ զերդ քո զիւցաղին ,
 Եւ մի՛ յածեսցիս յօդ փեարանման ։
- 8 Հայեանց յարծուին թեօք տաւունեալ ,
 Որ 'ի չափ ծիծուան կայ անգայտայեալ ,
 Նոյնպէս են թռիչք զիւցաղներդակիդ ,
 Յաչս համազդեացդ յօչինչ ամփոփեալ ։
- 9 Թաւանչ 'ի խորոց արձակէր սրտին ,
 Եւ ցօղ տողորէր զաչս երդաբանին ,
 Ասէ՛ քաջ զիտեմ՝ զազգիս ախորժակ ,
 Ունին մատուցից այդ քում՝ սլառզամկն ։
- 10 Քեզ ոչ նուենեաց ծաղկունք տան հրապոյր ,
 Երփնաղեղ նուանց ճեպել 'ի համբոյր ,
 Ո՛չ բոսորային ծաղկանց վարդենեաց ,
 Կարօտիս 'ի բոյր , յօծումն , 'ի սնդոյր ։
- 11 Թեթև քան զթիթեուն , քան զսիւղ ճապուկ ,
 Ո՛չ ճմլէս զծղօս աննիւթ քո ստիւք ,
 Մինչ կաքաւելով 'ի ցուցս կայթից ,
 Այդեաց դէպ յայգիս անցսնես սլարուք ։
- 12 Օդնեա՛ աղբրսեմ՝ մատանցս մատղեալ ,
 Զայն լար հարկանել՝ որ է քաջ լարեալ ։

- Զի 'ի շօշափել իմ' կնանտոցի՝
 Լսելի լիցի ձայն ներդաշնակեալ :
- 43 Հնչեա՛ զոր սաղրեաց քեզ դատրիկ այդեաց ,
 Եւ մի 'ի նանիր լինիր օղագնաց ,
 Թող զքերթածից զօրէն և զարհեստ ,
 Յեօթն յեղանակս ընդ ազդիդ խօսեանց :
- 14 Խօսեանց անսրաճոյճ՝ թէ յերկնել բնութեան ,
 Զո՛ր յիւր զիւցազանց երկնէր Հայաստան ,
 Ընդ որոյ ծնունդ Երասխ հին Գեհօն ,
 Ունէր բոլորել պար ուրախութեան :
- 45 Ծանո՛ թէ զի՞նչ դեր յնորք կրէին ,
 Կամ զխնոր մարդիկ նորօք վարէին .
 Զի՞նչ չքնաղ կանանց ազդասիրութիւն ,
 Զոր դուն ուրեք արք կրկնել յօժարին :
- 16 Երդեա՛ պատմաբար թէ ո՞յք տիրէին ,
 Երկրաց որք սլատեն զքո հայրենին .
 Զի՞նչ անցք 'ի նոսին կային տիրացեալ ,
 Կամ ո՛ր անդ կրկէս քումդ զիւցազնին :
- 17 Քաղցրիկ լուսաբաց այդ Հայաստանի ,
 Նոր դուն խնդութեան բացցէ հայկազնի ,
 Մանուկ նորածին դուռդ և խարտեաշ ,
 Զուղընթաց յայտնի ծննդեան հսկայի :

ԵՐԳ. Գ.

ԾՆՈՒՆԴ ՎԱՀԱԳՆԻ

- 1 Արծուին հռլաթև ծաղ յԱզատ Մասեաց ,
 Օգտարար 'ի թռիչս լողայր վերնասլաց ,
 Անյառ , անխտիղ յառէր մերթ 'ի ծով
 Որ զարփիափայլ մանուկնս երկնեաց :
- 2 Եւ մերթ յԱրմաւիր զաչս իւր ուղղէր :
 Ուր զիւցազունն իմ լսելի առնէր
 Զառաջին կանչ իւր յայնմիկ դարպասի ,
 Յորում աղղէ յաղդ տէր Մասեաց բնակէր :

- 3 Անդ էր Արամայ ծնեալ և սնեալ .
 Անդ տիկին Նուարդ զիւր Արայն սիրեալ .
 Եւ Անուշաւան յետ դերեգարձին ,
 Անդ զարդիւնարար կեանսն զրաւեալ :
- 4 Անդ Պարէտ նորոգ զգահ Հայկայ հաստեաց .
 Անտի և Զարմայր յարշաւան խումեաց .
 Պարոյր զայն արար դարպաս արքենի ,
 Հրաչեայ անդ խմբեաց պար զիւր հարսանեաց :
- 5 Անդ և արդ Տիգրան ունէր բնակութիւն ,
 Եւ անդ վարէր զիւր թագաւորութիւն ,
 Եւ յորժամ ետես զանդրանկին ծնունդ ,
 Քաջաց Մասեաց զիւր ձօնեաց զոհութիւն :
- 6 Առ յարքայական գիրկ զայն նորածին ,
 Ամբարձ դէպ 'ի վեր բազկօք 'ի բարձին .
 Ասաց . Ձեզ յանձնեմ՝ ով Աղատ Մասեաց
 Հըր զօրութիւնք զՎահագն իմ որդին :
- 7 Եղերո՛ւք սմա պահապան , պաշտպան ,
 Յամեն արկածից յանպօր մանկութեան ,
 Եւ թոյար ամուր 'ի զործս համբուն ,
 Մինչ 'ի ժամանեկ յօր զառամութեան :
- 8 Դուք՝ որ առաջնորդ մեծ Նահապետին ,
 Կայիք յաշխարհէ Սենաար դաշտին ,
 Ածիք , հաստեցիք յայսմիկ աշխարհի ,
 Եւ արկիք հիմունս հայկազանցս բաղդին :
- 9 Դուք զձեռանէ կալեալ Արամայ ,
 Արարիք զնա պոսկ տան Հայկայ ,
 Պարոյրայ և ինձ եղեալ զօրավիզ ,
 Փառաւորեցիք զործովք գիւցապնեաց :
- 10 Զնոյն օշնութիւն ձեր մի զլասջիք
 Ի նորածնէս՝ զոր ինձ պարգեւեցիք .
 Զի սա եղիցի ցնծութիւն ազդի
 Զոր շուրջ զՄասեօք մակաղեցուցիք :
- 11 Արծուին 'ի ծաղաց Արարատ լերին ,
 Լսելի արար զիւր ճշիւն ուժդին ,
 Եւ սաւառնացեալ զօդ սլաւաւելով ,
 Հանդեաւ 'ի տանիս յերդ անդ պարսպսին :

- 12 Մինչ այս ամենայն կտտարէր տակաւ,
Տիկնայք արամեան շուրջ զՋարուհեաւ,
Զիւղ և մեղր խառնեալ ընդ նաշոյ ալեր,
Զանգէին ջամբել խիւս մանկան ստկաւ:
- 13 Եւ Տիգրանուհի եօթնամեայ կուսան,
Քոյր թագաւորի՝ դշտոյ երուանդեան,
Հանդերձ քերք իւրով տիկնաւ Վարդգեսի,
Աւին զմանուկն՝ մինչ լռեաց Տիգրան:
- 14 Եղին յօրոյ մերձ ծննդականին,
Եւ ինքեանք զթաթիկս մանկան վնէին,
Ընդ քաղցրատեսիլ կերսպարան նորա
Հրճուէին ուրախ և զմայլէին:
- 15 Եւ ահա յին մի խոյացեալ յերդոյն,
Կալաւ ճիրանօք զաջ արքայորդոյն:
Եւ ՚ի խուճապել տիկնաց մեծուհեաց,
Գտաւ յինն ՚ի ճանկս Մասեաց արծուոյն:
- 16 Թռչունք ամհհիք կռուեալ աստկազին,
Յայնմիկ տալնապի մի մի ձու ածին.
Զորս նորածին իւր մանրիկ թաթովք
Ճմլեաց և եղեղ յիւր օրօրոյին:
- 17 Զայս ամենայն անցս ետես և Տիգրան,
Եւ օրինադրեաց յաշխարհ հայրենեան,
Զի ՚ի յիշատակ զեղման այս ձուոյ,
Չուպեղ մատչիցի յօր ծննդական: